



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Մահմետ Գորկին

106

ԿԱՐ ՈՒՂԵԿԻՑՆ

Թարգ.

Արքան սթաթեան

№ 10

Քիւն կ 10 դր.

Արքան սթաթեան

1904

Թաթեան

106

106
Grenada, St. Vincent, Barbados, etc.
1904

891.71-3

9-83

27 AUG 2006

25 NOV 2010

Ա.Ա.ԿԱՍՏՈՎ Գ.ՕՐԿԵՆԸ

106

105

ԽՍՀ ՈՒՀԱ ԵԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թարգմ. Ա. ԽԱՆԿԱ Ա. ԹԱՅԵԱՆ



Թիվ 1 ի գ

Արագատիստ Ա. Քութաթելամէի, Նիկ. 21

1904

21 MAR 2013

10696

Дозволено цензурою, Тифлисъ, 12 марта, 1904 г.

Ի Ս ՈՒՂԵԿԻՑ

I

Ես նրան Օգեստայի նաւահանգստում
պատահեցի: Մի երեք օր շարունակ իմ ու-
շադրութիւնն իր վրայ էր գրաւում նրա թիկ-
նաւէտ, ամբակազմ՝ կերպարանքը՝ գեղեցիկ
միբռով շրջագծւած արևելեան տիպի գէմ-
քով: Նա միշտ աչքովս էր ընկնում. ես տես-
նում էի, թէ ինչպէս ամբողջ ժամերով կանգ-
նում էր պատնէշի հատաքարին՝ ձեռնա-
փայտի կոթը բերանը կոխած և կարօտագին
դիտում նաւահանգստի պղտոր ջուրն իր սև
նշածկ աչքերով. օրը տասն անգամ նա մօ-
տովս անց էր կհնում անփոյթ Փլանեօրի
(Պատարկացրջիկի) քայլւածքով: Ո՞վ է... Ես
սկսեցի հետեւ նրան: Նա էլ կարծես դիտ-
մամբ ինձ գրգռելու համար աւելի ու աւելի
յաճախ էր աչքովս ընկնում, և վերջապէս ես
սովորեցի ջոկել հեռակ նրա մօդային, շար-
շար բաց գոյնի հագուստը և սև եւրոպա-
կան ձևի գլխարկը, նրա ծոյլ քայլւածքը և
բութ, ախուր հայեացքը: Նա միանգամայն
անբացատրելի էր այդտեղ, նաւահանգստում,

Նաւերի ու շողեղարժների սուլոցների, շըղ-
թաների շառաչի, բանտորների աղմուկի,
մարդուս ամեն կողմից համակած նաւահան-
գըստի կատաղի-ջղային ժխորի մէջ: Բոլոր
մարդիկ զրադւած էին, յոգնած, բոլորը
վազվզում, դորգուում, հայնոյում էին փո-
շու, քրտնքի մէջ... այդ տարօրինակ կեր-
պարանքն աշխատանքի ժխորում դանդաղ
անցուդարձ էր անում մեռելային տխուր
դէմքով, անտարբեր դէպի ամեն ինչ...

Վերջապէս արդէն չորրորդ օրը ճաշին ևս
հանդիպեցի նրան և վճռեցի՝ ինչ էլ որ լի-
նի՝ իմանալ, թէ ով է: Նրանից քիչ հեռու
տեղաւորելով սկսեցի հաց ու ձմերուկ ու-
տել և դիտել նրան՝ հնար մտածելով, թէ
ինչպէս անեմ, որ՝ որքան կարելի է քաղա-
քավարի ձեռվ նրա հետ խօսակցութիւն բա-
նամ:

Նա կանգնած էր՝ կոթնած թէյի արկղիկ-
ների կոյտին և աննպատակ մտիկ անելով
շուրջը՝ մատներով թխթիկացնում էր ձեռ-
նափայտը, կարծես ֆլէյտ ածելիս լինէր:

Ինձ «բօսեակի» շորով, բեռնողի թոկը
մէջքիս և ածխային փոշուց աղտոտւած մար-
դուս դժւար էր նրան—այդ ֆրանտին հետս
խօսել տալ: Բայց ի զարմանս իմ ես յետոյ
տեսայ, որ նա ինձնից չէ հեռացնում աշ-
քերը, և նրանք վառուում են մի խիստ ան-
դուրեկան, ագահ, անամնական կրակով: Ես
վճռեցի, որ իմ դիտողութիւնների առար-

կան քաղցած է, և շուրջս արագ մտիկ տա-
լով՝ կամացուկ հարցը նրանից.

—Քաղցած էք:

Նա ցնցւեց, ագահօրէն բաց արաւ ամ-
րակազմ, առողջ ատամների կարծես մի հա-
րիւրեակ և նոյնպէս կասկածանքով շուրջը
մտիկ արաւ:

Մեզ վրայ ոչ ոք ուշագրութիւն չէր գար-
ձընում: Այդ ժամանակ ես ձմերուկ ու ցորեն
հացի մի կտոր կոխեցի նրա ձեռը: Նա խլեց
այդ բոլորն ու անյայտացաւ՝ նստելով ապ-
րանքի կոյտի յետեւում: Երբեմն այնտեղից
դուրս էր գալիս նրա գլուխը՝ եւրոպական
գլխարկով, որը դրւած էր ծոծրակին և
ծածկում էր քրտնքու թուխ ճակատը: Նրա
դէմքը փայլում էր բացըրեան ժպտով, և
նա՝ չգիտեմ ինչնէ՝ շուտ-շուտ աչքով էր ա-
նում ինձ՝ ոչ մի վայրկեան չգագարելով
ծամելուց: Ես նրան նշան արի սպասել ինձ,
կնացի միս գնելու, գնեցի, բերի, տւի նը-
րան և կանգնեցի արլիզների մօտ այնպէս,
որ բոլորովին ծածկեցի իմ խեղճ ֆրանտին
կողմնակի հայեացըներից: Մինչեւ այդ նա
ուտում ու անդադար գիշատիչ կերպով
շուրջն էր մտիկ անում, ասես վախում էր,
որ պատառը կլանեն. այժմ նա սկսեց հան-
գիստ ուտել բայց էլի այնպէս շտապ ու
ազահարար, որ ես ցաւ էի զգում այդ սո-
վալլուուկ մարդին նայելիս, ուստի մէջքս դէ-
պի նա դարձրի:

—Благодару! *) (շնորհակալ եմ), շատ
շնորհակալ եմ.—նա թափահարեց ուսս, ապա
ձեռս էր բռնեց ու սկսեց անողորմաքար թա-
փահարել:

Հինգ ըստէից յետոյ նա արդէն ինձ պատ-
մում էր, թէ ով է:

Վրացի, իշխան Շաքրօ Պտաճէն, քութա-
յիսցի հարուստ կալւածատիրոջ միակ զա-
ւակ, կովկասեան երկաթուղու կայարաննե-
րից մէկում գրասենեակային ծառայող, ապ-
րելիս է լինում մի ընկերոջ հետ: Այդ ըն-
կերը յանկարծ անյայտանում է՝ յափշտակե-
լով տանելով իր հետ իշխան Շաքրօի փո-
ղերն ու արժէքաւոր իրեղէնները, և ահա
Եշխանը հետամուտ է լինում նրան: Մի կերպ
պատահմամբ նա իմանում է, որ ընկերը
տոմսակ է վերցրած եղել Բաթում գնալու.
Իշխան Շաքրօն նոյնպէս ուղևորւում է այն-
տեղ: Բայց Բաթումում երեռմ է, որ ըն-
կերը գնացել է Օդեսսա: Այն ժամանակ իշ-
խան Շաքրօն վերցնում է ինչոր վանօ
Մվանիձէի անցաթուղթը,—մի սափրչի, —
նոյնպէս ընկեր, բայց նշաններով իրան ոչ
նման, ճամապարհ ընկնում Օդեսսա: Այդ-
տեղ նա յայտնում է ոստիկանութեանը գո-
զութեան մասին, նրան խոստանում են, թէ
կգտնեն գողին, նա սպասում է երկու
շաբաթ, փողերը վերջացնում, և ահա ար-

*) Նա ոսերէն խօսում էր կոպիտ աբտասանու-
թեամբ, կոտրտած:

գէն երկրորդ օրն էր, որ բներանը պատառ
չէր գրել:

Ես լուսմ էի նրա՝ հայհոյանքների հետ
խառը պատմութիւնը, նայում նրան, հա-
ւատում, և խեղճս էր գալիս երեխան: Նա
գեռ երեխայ էր, քան տարին մտած, բայց
միամտութեանը նայած նրան կարելի էր ա-
ւելի փոքր համարել: Նա յաճախ և խորին
զայրոյթով յիշում էր այն սերտ բարեկա-
մութեան մասին, որը կապում էր նրան գող-
ընկերոջ հետ, որը գողացել էր այնպիսի ի-
րեր, որոնց համար Շաքրօի դաժան հայրը
հաւանօրէն կմորթէ իր որդուն «իսանչա-
լով», թէ որդին նրանց չգտնէ: Ես միտք
արի և տեսայ, որ եթէ չօգնեմ այդ տղային,
անկուշտ քաղաքը նրան կլլանէ: Ես գի-
տէի, թէ երբեմն ինչ չնչին դիպւածներ են
մարդկանց մղում բօնեակների գասակարգի
մէջ, իսկ ներկայ պարագայում իշխան Շաք-
րօի համար ամեն շանսեր կային ընկնելու
այդ յարգելի, բայց չյարգւող դասը: Մէջս
ցանկութիւն զարթնեց նրան օգնելու: Շաք-
րօին ես առաջարկեցի զնալ և ոստիկանա-
պետից թուղթ ինդրել, նա կակագից և
հաղորդեց ինձ, որ չի զնալ ինչու: Բանից
գուրս եկաւ, որ նա չէ տեղ իր կենալիս
համարների փողը, իսկ երբ նրանից պա-
հանչել են, նա մէկին խփել է, յետոյ թագ-
նըւել և այժմ արդարացի կերպով ենթագը-
րում է, որ ոստիկանութիւնը նրա բանը

բուրդ կանէ այդ վողը չտալու և հարւածի
համար. հա, իդէպ, նա շատ էլ լաւ չէ յի-
շում—մէկ հարւած է հասցըեւ թէ երկու,
երեք, թէ չորս:

Բանը գժւարանում էր: Ես վճռեցի այն-
քան աշխատել, մինչև որ բաւական փող
վաստակեմ նրա համար Բաթում գնալու,
բայց աւազ, բանից դուրս եկաւ, որ այդ
իսկի էլ շուտ գլուխ գալու բան չէ, որով-
հետեւ սովալլուկ Շաքրօն ուտում էր երեք
մարդի չափ և աւելի:

Այդ ժամանակ «սովելսների» մեծ հո-
անքի շնորհիւ նաւահանգստում օրավար-
ձերը շատ ցածր էին, և ութսուն կոպէկ
վաստակից երկուսս վաթսունն ուտում էինք:
Բայցի այդ՝ գեռ մինչև իշխանին հանդիպելու
և որոշած էի Դրիմ գնալ, ուստի և չէի ու-
զում երկար մնալ Օդեսսա: Այն ժամանակ
ես իշխան Շաքրօին առաջարկեցի ինձ հետ
ոտով գնալ այսպիսի պայմաններով. եթէ ես
նրա հետ թիֆլիկ գնացող ուղեկից չգտնեմ,
այն ժամանակ ինքս տեղ կհասցնեմ, իսկ
եթէ գտնեմ, այդ դէպքում մենք իրար հը-
րաժեշտ կտանք:

Իշխանը նայեց իր պճուն մուձակներին,
զլսարկին, անդրավարտիքին, ձեռքը քսեց
կուտիկին, մի քիչ միտք արաւ, մի քանի
մնդամ հառաչ քաջեց ու վերջապէս համա-
ձայնեց: Եւ ահա մենք միասին ոտով ճանա-
պարհ ընկանք Օդեսսայից թիֆլիկ:

— 8 —

II

Երբ հասանք Խերսօն, ես ճանաչում էի
իմ ուղեկցին իրեւ միամիտ-վայրենի, չափա-
զանց անզարգացած, ուրախ մի տղայի—երբ
նա կուշտ էր լինում, լքւած—երբ քաղցած
էր, ինչպէս ուժեղ և պարզամիտ մի կեն-
դանի:

Ճանապարհին նա ինձ պատմում էր Կով-
կասի մասին, կալւածատէր վրացիների
կեանքի, նրանց գլարձութիւնների և դէպի
գիւղացիներն ունեցած յարաբերութիւնների
մասին: Նրա զրոյցները հետաքրքիր էին,
ինքնուրոյն գեղեցիկ, սակայն պատմողին
նկարում էին իմ առջև չափազանց ոչ գովե-
լի կողմից: Պատմում էր նա՝ օրինակ այս-
պիսի մի դէպք.

Մի հարուստ իշխանի մօտ նրա հարեան-
ները ըէֆի հաւաքւեցին. զինի խմեցին,
չուրեկ կերան ու խորոված, կերան լաւաշ
ու փլաւ, և յետոյ իշխանը հիւրերին տա-
րաւ գոմը: Չիերը թամբեցին: Իշխանն իր
համար վերցրեց ամենալաւը և քշեց գաշտի
միջով: Կրակուած ձի էր: Հիւրերը գովում են
նրա վայելչագեղութիւններն ու արագավա-
զութիւնը, իշխանը նորից է սլանում, բայց
յանկարծ մի գիւղացի սպիտակ ձիի վրայ
առաջը կտրում,— կտրում է ու... հպարտ
ծիծաղում: Իշխանն ամօթահարւում է հիւ-

— 9 —

բերի առջևունք և մատութեամբ կիտում է յօնքերը, ձեռքի նշանով մօտ կանչում գիւղացուն, և երբ նա մօտենում է, այն ժամանակ իշխանը սրի մի հարւածով կտրում է նրա դուխը և ատրճանակն արձակելով ձիի ականջի մէջ՝ սպանում է ձին, իսկ յետոյ իշխանութեանը յայտնում իր արածը: Եւ նրան տաֆանակիր աշխատանքի են դատապարտում:..

Շաքրօն այդ հաղորդում է ինձ իշխանին ափսոսով տօնով: Ես փորձում եմ ապացուցել նրան, որ խոճալու բան չկայ, սակայն նա մեծօրէն ասում է ինձ:

—Իշխաններ քիչ կան, գիւղացիներ շատ: Մի գիւղացու համար չէ կարելի դատապարտել իշխաններին: Խնչացնել է գիւղացին: Այս, —և Շաքրօն ցոյց է տալիս ինձ մի գունտ հող: —իսկ իշխանը —որպէս աստղ է:

Մենք վիճում ենք, և նա սրտմտում է: Երբ նա բարկանում է, ատամները բաց է մնում գայլի նման, և երեսը սրանում է:

—Լոյն, Մակսիմ: Դու չես ճանաչում կովկասեան կեանքը, —գոչում է նա:

Իմ պատճառաբանութիւններն անզօր էին նրա իրասածութեան առաջ, և այն, ինչ որ ինձ համար պարզ էր, նրա համար ծիծառելի էր: Երբ ես իմ հայեացքների գերազանցութեան ապացոյցներով նրան այնպիսի դըրութեան մէջ էի գցում, որ նա չէր կարող ինձ հակառակել, նա առանց տարակուսելու

ասում էր ինձ.

—Գնա կովկաս, ապրիք այնտեղ: Կըտեսնես, որ ես ճշմարիտ եմ ասել: Ամենքն այդպէս են անում, նշանակում է՝ այդպէս էլ պէտք է: Ինչո՞ւ ես պիտի քեզ հաւատամ, քանի որ մենակ դու ես ասում՝ այս այսպէս չէ, իսկ հազարաւորներն ասում են՝ այս այսպէս է:

Այս ժամանակ ես լուսմ էի՝ հասկանալով, որ պէտք է ոչ թէ խօսքերով, այլ փաստերով առարկել նրան, այդ մարդին, որը հաւատացած է, թէ կեանքը ինչպէս որ կայ, լիովին օրինական է ու արդարացի: Ես լըսում էի, իսկ նա հիացմունքով՝ շրթունքները չփչփայնելով խօսում էր կովկասեան կեանքի մասին, որը լի է կրաքով և ուրացնութեամբ: Այդ զրոյցներն ինձ հետաքըրքերով և գրաւելով՝ միենոյն ժամանակ վըրդովովում ու կատաղեցնում էին իրանց վայրագութեամբ, հարստութեանը և բիրտ ոյժին երկրպագելովը: Մի անգամ ես հարցրի նըրանից, թէ նա գիտէ արդեօք Քրիստոսի վարդապետութիւնը:

—Իհարկէ, —ուսերը թօթւելով պատասխանեց նա:

Բայց երբ հարցուվորձ արի, բանից գուրս եկաւ, որ նա գիտէ այսքան: մի Քըրիստոս է եղել, որ հրէական օրէնքների դէմ է գուրս եկել, և հրէաները դրա համար խաչել են նրան խաչի վրայ: Բայց նա Աստւած

է եղել, ուստի և չէ մեռել խաչի վրայ, այլ
համբարձւել է երկինք և այն ժամանակ
մարդկանց տւել կեանքի նոր օրէնք...

—Ի՞նչ օրէնք,—հարցրի ես:

Նա նայեց վրաս ծաղրական երկմտու-
թեամբ և հարցրեց.

—Դու քրիստոնեայ ես: Հը: Ես էլ եմ
քրիստոնեայ: Աշխարհիս վրայ համարեան ա-
մենքը քրիստոնեայ են: Դէ էլ ի՞նչ ես հար-
ցընում: Տեսնում ես, թէ ինչպէս են ապրում
ամենք... Հէնց դա էլ Քրիստոսի օրէնքն
է որ կայ:

Ես վրդովւած՝ սկսեցի նրան պատմել
Քրիստոսի կեանքի մասին: Նա սկզբից ու-
շագրութեամբ լսում էր, յետոյ այդ ուշա-
գրութիւնն սկսեց հետզհետէ թուլանալ և
վերջապէս վերջացաւ յօրանջով:

Տեսնելով՝ որ նրա սիրտն ինձ չէ լսում,
ես սկսեցի նորից դիմել նրա խելքին և խօ-
սել փոխադարձ օգնութեան օգտաւէտութեան, օրի-
նաւորութեան օգտաւէտութեան, օգտաւէ-
տութեան, շարունակ օգտաւէտութեան մա-
սին... Իմ պատճառաբանութիւնները փշը-
ռում էին՝ դիպչելով նրա աշխարհասկացո-
ղութեան պատին:

—Ով ուժեղ է, նա ինքն իր օրէնքն է!
Նրան պէտք չէ սովորել, նա կոյր-կոյր էլ
կպանէ իր ճանպան,—ծուլօրէն առարկեց
ինձ իշխան Շաքրօն:

Նա կարողանում էր ի՞նքն իրան հաւա-
տարիմ մնալ, Դա մէջս յարգանք էր զար-
թեյնում դէպի նա, բայց նա վայրենի էր,
խստասիրտ, և ես զգում էի, որ երբեմն մէ-
ջըս ատելութիւն էր բռնկում դէպի Շաք-
րօն: Սակայն չէի կորցնում յօյս գտնելու
մեր մէջ շօշափման կէտ և հող, որի վրայ
երկուս էլ կարողանայինք միանալ և իրար
հասկանալ:

Մենք անցանք Պերեկօպը և մօտենում
էինք Եայլային: Ես երազում էի Ղրիմի հա-
րաւային ափը, իշխանն ատամնելի արանքով
իր վիրական երգերը երգելով՝ մոայլ էր:
Բոլոր փողերս վերջացան, և աշխատելու
տեղ էլ չկար տակաւին: Մենք շտապում
էինք Թէօթօսիա, որտեղ այդ ժամանակ ըս-
կաւում էին նաւահանգիստը շինելու գործերը:

Իշխանն ինձ ասում էր, որ նա էլ է բա-
նելու, և որ փող աշխատելով՝ մենք ծովով
կգնանք Բաթում: Բաթում նա շատ ծա-
նօթներ ունի, և անմիջապէս ինձ համար
դրնապաննի կամ պահապանի տեղ կգըտ-
նէ: Նա խփում էր ուսիս և լեզուն քաղցր
ծփծփացնելով՝ հովանաւորաբար ասում.

—Ես քեզ համար մայնապիսի կեանք
ստեղծեմ որ, ծծը՝, ծծը՝: Գինի խմես—ինչ-
քան ուզես, ոչխարի միս—ինչքան ուզես:
Կպսակւես վիրուհու հետ, մի հաստիկ
վիրուհու, ծծը՝, ծծը՝, ծծը՝... նա քեզ համար

լաւաշ կթիմէ, երեխաներ կբերէ, շատ երեխաներ, ծծը՝, ծծը։

Այդ «ծծը», ծծը»-ն առաջ ինձ զարմացնում էր, ապա սկսեց գրդուել, յետոյ արդէն ինձ հասցնում էր թախծալի կատաղութեան։ Ուուսաստանում այդպիսի հընչինով խոզերին են կանչում, իսկ կովկասում նրանով արտայայտում են հիացք, ափսոսանք, բաւականութիւն, վիշտ։

Շաքրօն արդէն խիստ գզզզել էր իր մօդային զգեստը, և նրա մուճակները ճաքճըւել էին շատ տեղերից։ Զեննափայան ու եւրոպական գլխարկը ծախել էինք Խերսոնում։ Այդ գլխարկի տեղ նա գնել էր երկաթուղիական աստիճանաւորի մի հին ֆուրաժկա։

Երբ նա առաջին անգամ գլխին դրաւ այն, —սաստիկ ծուռ դրաւ, —ինձնից հարցրեց,

— Սազնում է։ Գեղեցիկ է։

III

Եւ ահա Նրիմ ենք։ Անցանք Սիմֆերոպոլը և ուղղւեցինք դէպի եալթա։

Ես գնում էի համը սքանչանքի մէջ հողի այդ հրաշալի կտորի բնութեան առաջ, հողի, որին ամեն կողմից փաղաքշում է ծովը։ Հշանը հառաջում էր, վշտուում և շուրջը տիտուր հայեացքներ գցելով փորձում էր լցնել իր դատարկ ստամոքսն ինչ-որ տարօրինակ հատապտուղներով։ Նրանց մննդարար յատ-

կութիւններին ծանօթ լէնելը յաջող ելքի էր հասցնում ոչ միշտ, և յաճախ նա չար յումորով ասում էր ինձ.

— Եթէ փորս տակնուվրայ անի, ի՞նչպէս պէտք է շարունակեմ ճանապարհ, հը, ասա, ի՞նչպէս։

Մի բան վաստակելու հնարաւորութիւն չէր ներկայանում, և մենք չունենալով ոչ մի գրոշ հացի փող՝ մնում էինք մրգերով և ապագայի վրայ կապած յոյսերով։ Իսկ իշխան Շաքրօն սկսել էր արդէն ինձ յանդիմանել ծովլութեան և ինչպէս ինքն էր ասում «Քերանաբացութեան», համար։ Նա ընդհանրապէս դարձել էր անտանելի, բայց աւելի շատ նեղացնում էր ինձ իր զրոյցներով իր առասպելական ախորժակի մասին։ Բանից դուրս էր գալիս, որ նա ժամի 12-ին նախաճաշերով «մի գառնուկ», երեք շիշ գինի, ժամի 2-ին կարող էր առանց մի առանձին դժւարութեան ճաշին ուտել երեք ափսէ ինչ-որ «չախախրիլի»*, կամ «չխրթմա», մի ամբողջ թաւա փլաւ, մի ամբողջ շամփուր խորոված, «ինչքան ուզեն» դոլմաց և գեռ էլի կովկասեան շատ խորտիկներ, և այդ ժամանակ կխմէր գինի—«ինչքան քէփը տար»։ Նա ամբողջ օրերով պատմում էր ինձ իր խոհանոցագիտական հակումների և հմտութիւնների մասին, —պատմում էր՝ «միփացնե-

* Աիշտը «չախախրիլի»։

ով շրթունքները, վառւող աչքերով, աստամները բաց անելով ու կրծտացնելով, հնչուն կերպով ներս քաշելով ու կուլտալով քաղցած թուքը, որ առատութեամբ ցայտում էր նրա պերճախօս շրթունքներից:

Մի անգամ եալթայի մօտ ինձ վարձեցին մրգեղէնի մի այգի կտրտած ճղներից մաքըր բերու, ևս օրավարձս նախօրօք առայ և ամբողջ յիսուն կողէկին գնեցի հաց ու միս: Երբ գնածս բերի, այգեպանն ինձ կանչեց, և ես գնացի՝ այդ գնած բաները յանձնելով Շաքրին, որը հրաժարւել էր աշխատանքից՝ պատճառարանելով, թէ գիխացաւ ունի: Մի ժամից յետոյ վերադառնալով ևս համոզւեցի, որ Շաքրօն իր ախորժակի մասին խօսելիս՝ դուրս չէր եկել ճշմարտութեան սահմանից, իմ գնածից ոչ մի փշրանք չէր մնացել: Դա ընկերական վարմունք չէր, բայց ես սուս արի ի դժբախտութիւն իմ, ինչպէս երևաց յետագայում:

Շաքրօն նկատեց իմ լրութիւնը և նրանից օգտւեց իր ձեռվ: Այդ ժամանակից սկսւեց մի տեսակ զարմանալի անմիտ բան: Ես աշխատում էի, իսկ նա զանազան պատճառաբանութիւններով հրաժարւում էր բանից, ուտում-խմում ու ինձ աշխատել ստիպում: Ինձ համար ծիծաղելի և ցաւալի էր նայել նրան, այդ առողջ տղամարդին, որ ընչափաղութեամբ մտիկ էր անում ինձ, երբ ես գործս վերջացրած՝ յոփնած վերադառնում էի

նրա մօտ, որը մի շւաք տեղ սպասելիս էր լինումինձ: Բայց աւելի վշտալի ու վիրաւուրական էր տեսնել, որ նա ծիծաղում է վըրաս այն պատճառով, որ ես բանում եմ նա ծիծաղում էր, որովհետեւ սովորել էր ողորմութիւն ինդրել, և որովհետեւ ես նրա աչքում մի անկենդան խրտւիլակ էի: Երբ նա սկսեց ողորմութիւն հաւաքել, սկզբում քաշւում էր ինձնից, բայց յետոյ, երբ մօտենում էինք մի թաթարական գիւղի, նա սկսում էր աշքիս առաջ պատրաստել մուրալու: Դրա համար նա յենուում էր փայտին և ոտը գետնով քաշ տալիս, ասես թէ ցաւելիս լինէր, իմանալով որ ժլատ թաթարները առողջ տղամարդին ողորմութիւն չեն տալ: Ես վիճում էի նրա հետ, ցոյց տալիս նրա սպառափակի մի զբաղմունքի ամօթալիութիւն, ԱՅՆ ԹՐՈՂԱՐԱԿ զում էր:

—Ես չեմ կարողանում բանել! —կարուկ առարկում էր նա:

Նրան ողորմութիւն քիչ էին տալիս: Ինչ այդ ժամանակ սկսել էի կուտանանալ: Ճանապարհն օրէցօր դառնում էր աւելի գժւար և իմ յարաբերութիւնները Շաքրօն հետ աւելի ծանր: Նա այժմ արդէն խիստ պահանջում էր, որ ես նրան կերակրեմ:

—Դու ինձ տանհւմ ես: Տար: Միթէ ես կարող եմ ոտով այդքան հեռու տեղ գնալ, հը՞, ես սովոր չեմ: Ես դրանից կարող եմ մեռնել, ի՞նչ ես ինձ չարչարում, սպանում:

Ես որ մեռնեմ, ո՞նց կլինի: Մէրս լաց կը-
լինի, հէրս լաց կլինի, ընկերներս լաց կը-
լինին, էղ ի՞նչքան արցունք է անում հա: :
Ես այսպիսի խօսքեր էի լսում, բայց չէի
բարկանում: Այդ ժամանակ սկսել էր մէջս
ծագել մի տարօրինակ միտք, որ ինձ հար-
կադրում էր դիմանալ այդ բոլորին: Պատա-
հում էր—նա քնած է լինում, իսկ ես նրա
կողըին նստած, դիտելով նրա հանդիսա,
անշարժ դէմքը, կրկնում եմ ինքս ինձ՝ կար-
ծես նախագուշակելով մի բան.

—Իմ ուղեկիցը... ուղեկիցս...

Եւ գիտակցութեանս մէջ երեմն ծագում
էր այն միտքը, թէ Շաքրօն միայն օգտառում
է իր իրաւունքից, երբ այնաէս վստահ ու
համարձակ պահանջում է ինձնից օգնութիւն
ու ինամք: Այդ պահանջի մէջ կար բնաւո-
րութիւն, կար ոյժ: Նա ինձ հարստահարում
էր, ես նրան ենթարկում էի և ուսումնա-
սիրում, հետեւում նրա կերպարանքի իւրա-
քանչիւր գորոցին՝ աշխատելով մէջս պատ-
կերացնել, թէ ուրիշ անձնաւորութիւն թա-
լանելու այդ պրոցեսսի մէջ ուր և ինչի վրայ
կանգ կառնի նա: Իսկ նա իրան շատ լաւ էր
զգում, երգում էր, քնում ու ծիծաղում վը-
րաս, երբ քէֆը տալիս էր: Երբեմն իրարից
բաժանւում էինք երկուշերեք օրով, գնում
զանազան կողմեր, ես նրան հաց ու փող էի
տալիս, եթէ լինում էր, և ասում, թէ որտեղ
ինձ սպասէ: Երբ կրկին հանդիպում էինք,

այն ժամանակ նա, որ ինձ ճանապարհ գրած
էր լինում կասկածանքով ու տիսուր չարու-
թեամբ, դիմաւորում էր սաստիկ ուրախ,
հրձւած և միշտ ասում էր ծիծաղելով.

—Ես կարծում էի, թէ դու ինձ թողել,
մենակ վախել ես: Հա, հա, հա...

Ես նրան ուտելու բան էի տալիս, պատ-
մում էր իմ տեսած գեղեցիկ տեղերի մա-
սին, և մի անգամ Բախչա-Սարայի մասին
խօսելին՝ իդէպ պատմեցի Պուշկինի մասին
և ասացի նրա ոտանաւորներից: Այդ բոլորը
ոչ մի տպաւորութիւն չարաւ վրան:

—Է՛, ոտանաւորներ: Դա երգեր են և ոչ
թէ ոտանաւորներ: Ես մի մարդ էմ ճանա-
չում, վրացի, Մատո Լեթավա, նա էր երգ
ասում է: Այդ, դա երգեր էին... Որ եր-
գում էր—այ, այ, այ... բարձր... շատ բարձր
էր երգում: Կասես թէ կոկորդը խառնշարում
են խանչալով.. Նա մի գինեվաճառ մորթեց,
հիմի Սիբիր է գնացած...

Ամեն մի նրա մօտ վերադառնալիս ես
աւելի ու աւելի էի ընկնում նրա աչքում, և
նա չէր կարողանում այդ թագցնել ինձնից:

Գործներս շատ վատ էր: Ես հազիւ էի
հսարաւորութիւն գտնում մի կամ մէկուկէս
ըուբլի աշխատել շաբաթական, և, ինքնըստ-
ինքեան հասկանալի է, որ այդ աւելի քան
քիչ էր երկուսիս համար: Շաքրօի մուրալը
չէր նպաստում կերակրի տնտեսութեանը,
նրա ստամոքսը մի փոքր անդունդ էր, որ

կլանում էր անխստիր ամեն ինչ — խաղող, սեխ, աղ գրած ձուկ, հաց, չորացրած մրգեր — և ժամանակի ընթացքում նա կարծես աւելի էր մեծանում ծաւալով և աւելի ու աւելի դոհեր պահանջում:

Շաքրօն սկսեց շտապեցնել ինձ գուրս գալու Դրիմից՝ պատճառաբանօրէն յայտնելով ինձ, որ շուտով արդէն աշունը վրայ կը-համնի, իսկ ճանապարհ դեռ շատ կայ: Միւս կողմից էլ ևս նայել վերջացրել էր Դրիմի այդ մասը, և մենք ճանապարհեցինք դէպի թէօդոսիա այն յուսով, որ «մի քանի շահի կցինք ճանկներս», որից էլի զուրկ էինք: Նորից պէտք է մնէինք մրգերով ու ապա- գայի յուսով...

Խեղճ ապագայ: Նրա վրայ դրած մարդ-կային յոյսերի շատութիւնից նա կորցնում է համարեա իր բոլոր հմայքը, հէնց որ ներ-կայ է դառնում:

Ալուշտայից քսան վերստ հեռանալով՝ մենք կանգ առանք գիշերելու: Ես Շաքրօին համո- գել էի ծովափով գնալ, թէև այդ շատ եր- կար ճանապարհ էր, բայց ուզում էի ծովի օդ շնչել: Մենք խարոյկ վառեցինք և պառ- կուտեցինք նրա մօտ: Երեկոն հրաշալի էր: Մուգ-կանաչ ծովը ներքենում մեղնից վար զարկւում էր ժայռերին. կապոյտ երկինքը հանդիսաւոր կերպով լուռ էր վերևում, իսկ մեր շուրջը մեղմիկ սլալում էին թփերն ու ծառերը: Կուսինը դուրս էր գալիս: Սօսի-

ների ճամկաւոր սաղարթից ստւերներ էին ընկնում և սողում քարերի վրայով: Մի ինչ- որ թռչուն երգում էր ըմբոստ ու զիւ: Նրա արծաթահնչիւն դայլայլիկները հալչում էին ալիքների մեղմ ու փաղաքշող վշշոցով լցւած օդի մէջ, և երբ նրանք անհետացան, լւեց մի միջատի ջղային ճոճոցը: Խարոյկը գւարթ այրում էր, և նրա կրակը թւում էր կար- միր ու գեղին ծաղկիների մի բոցավառ փունջ: Նա էլ էր ստւերներ առաջայնում, և այդ ստւերներն ուրախ-ուրախ ցատկվ- տում էին մեր շուրջը՝ ասես լուսնի դա- լով ստւերների առաջ պարծենալով իրանց աշխուժութեամբ: Ծովի լայն հօրիզօնն ա- մայի էր, նրանից վեր երկինքն անամպ, և ես ինձ աշխարհիս մի ծայրումն էի զգում գիտելիս տարածութիւնը — մարդի հոգին գիւթող այդ առեղծւածը... Գիշերւայ փա- ռահեղ գեղեցկութեամբ հոգեզմայլ՝ ես ասես հալչում էի գոյների, ձայների ու հոտերի զարմանալի ներգաշնակութեան մէջ, ինչ-որ մեծ բանի մօտ լինելու երկշուռ զգացումով լցւում էր հոգիս, և սիրտս թրպրտալով թալկանում էր կեանքի վայելքով...

Յանկար Շաքրօն բարձրածայն քրքջաց. — Հա, հա, հա... Ի՞նչ տխմար կերպարանք ունես: Բոլորովին ինչպէս ոչխարի: Ա՛, հա, հա, հա, հա...

Ես վախեցայ, ասես թէ զլսիս յանկարծա- կի որոտը թնդաց: Բայց այդ աւելի վատ

էր: Դա ծիծաղելի էր, այո, բայց ի՞նչպէս
վիրաւորական էր... Նա, Շաքրօն, լալիս էր
ծիծաղից, ևս ինձ լալու պատրաստ էի զգում
ուրիշ պատճառով: Կոկորդումն կարծես քար
կար, ևս չէի կարողանում խօսել և վայրագ
աչքերով նրան էի նայում, որով աւելի էի
սաստկացնում նրա ծիծաղը: Նա թաւալուում
էր գետնի վրայով՝ փորը բռնած. ևս էլ զեռ
չէի կարողանում զինքս հաւաքել ինձ հասցրած
վիրաւորանքից... ինձ խիստ ծանր վիրաւո-
րանք էր հասցրւած, և այն քիչ մարդիկ,
որոնք՝ յուսով եմ որ կհասկանան այդ, —
որովհետեւ գուցէ իրանք զգացել են այդօրի-
նակ մի բան, — նրանք նորից կվերզգան
իրանց հոգում այդ ծանրութիւնը:

—Վերջ տուր, —կատաղած զոռացի ես:

Նա վախեց, ցնցւեց, բայց զեռ էլի չէր
կարողանում իրան զսպել, ծիծաղի բռնկում-
ները գեռ էլի բռնում էին նրան, նա ուղղնում
էր թշերը, աչքերը չուռմ, և յանկարծ նորից
փոթկացնում: Այն ժամանակ ես վեր կացայ
ու հեռացայ նրանից: Ես երկար գնում էի,
առանց մտածելու, համարեա առանց գի-
տակցելու, մենակութեան և վիրաւորանքի
այրող թունով լցւած: Ես գրկում էի ամ-
բողջ բնութիւնը և լուս, ամբողջ հոգով սէրս
էի յայտնում նրան, վառ սէրս մի մարդու,
որը քիչ բանաստեղծ է... իսկ բնութիւնը՝
յանձին Շաքրօն՝ քըքջրւմ էր վրաս յափշտա-
կութեանո համար: Ես հեռու կգնայի մե-

ղաղրական վճիռ կայացնելում բնութեան,
Շաքրօն և կեանքի բոլոր կարգերի դէմ, սա-
կայն յետևիցս արագ քայլեր լուեցին:

—Մի բարկանար՝ ամօթահարւած ար-
տասանեց Շաքրօն՝ կամաց դիպչելով ուսիս:
—Դու աղօթմում էիր: Ես չգիտէի: Ես ինքս
չեմ աղօթում...

Նա խօսում էր չարութիւն արած երե-
խայի երկչուտ տօնով, և ես՝ չնայելով յուզ-
մունքիս՝ չկարողացայ չտեսնել նրա խղճալի
կերպարանքը՝ շփոթմունքից ու վախից ծի-
ծաղելի կերպով ծումուած:

—Ես այլս քեզ ձեռք չեմ տալ: Ճշմա-
րիտ! Երբէք:

Նա բացասարար թափահարեց գլուխը:

—Ես տեսնում եմ, որ դու խոնարհ ես:
Բանում ես: Ինձ չես ստիպում: Մտածում եմ—
ինչու: Ուրեմն յիմարի է նա ոչխարի պէս...

Այդ նա ինձ միմիթարում էր: Այդ նա
ներոգութիւն էր խնդրում խնձնից: Իհարկէ՝
այդպիսի միմիթարանքներից ու թողութիւն
հայցելուց յետոյ ինձ ոչինչ չէր մնում անե-
լու, եթէ ոչ ներել նրան ոչ միայն անցեա-
լը, այլև՝ ապագան:

Կէս ժամից յետոյ նա խորը քնած էր,
իսկ ես նստած էի նրա կողքին ու նայում
էի նրան: Քնած ժամանակ ուժեղ մարդն ան-
գամ անոպաշտպան ու անօգնական է թւում,
իսկ Շաքրօն արգահատելի էր: Նրա հաստ
շրթունքները կիսաբաց էին և կիտած յօնքե-

րի հետ միասին պատկերացնում էին նրա դէմքին զարմանքի գուշ-մանկական մի արք տայայտութիւն։ Շնչում էր նա համաշափ, հանգիստ, բայց երբեմն դեղերում ու զառանցում էր՝ վիրերէն ամբողջ դարձւածներ ասելով աղաչանքով ու փութեռու։ Մեր շուրջը թագաւորում էր այն լարւած խաղաղութիւնը, որից միշտ մի բան ես սպասում, և որը իթէ կարողանար երկար շարունակւել, մարդին խելքից կհանէր իր կատարեալ անգորութեամբ ու հնչիւնի—շարժման այդ պայծառ ստւերի բացակայութեամբ։ Ալիքների մեղմ ճողիիւնը չէր հասնում մեղ, - մենք գտնուում էինք մի փոսում, որը պատաժ էր կաչուն մացառներով, կարծես քարացած կենդանու բրդբրդու բերան լինէր։ Ես մտիկ էի անում Շաքրօին ու մտածում։ «Սա իմ ուղեկիցն է... Ես կարող եմ սրան այստեղ թողնել, բայց չեմ կարող նրանից հեռանալ, որովհետեւ նրա անունը լեցիոն է... Սա իմ ամբողջ կեանքի ուղեկիցն է... Նա մինչև գերեզման կուղեկցէ ինձ»...

IV

Թէօդոսիան իդերև հանեց մեր յոյսերը։ Երբ մենք տեղ հասանք, այնտեղ կար մօտ չորս հարիւր մարդ՝ մեղ պէս գործի սպասելիս և նոյնպէս ստիպած բաւականանալ

նաւամատոյցի պատճէշը շինելուն հանգիստւ տես լինելու դերով։ Աշխատում էին թուրքեր, յոյներ, վրացիներ, սմոլենսկցիներ, պոլտավցիներ։ Ամենուրեք - և քաղաքում էին «սովետների» դժգոյն, չարչարւած կերպարանքներ, և գայլային արշաւանքով դէս-դէս էին թափառում ազովեան ու տաւրիկեան բօսեակները։

Տեսնելով՝ որ այդտեղ ոչինչ չկայ, և որ պատճէշը կամենում են շինել առանց մեզ, մենք գնացինք Կերչ։

Իմուղեկիցը կատարում էր իր խօսքը և ինձ ձեռք չէր տալիս. բայց նա սաստիկ սովում էր և մէկի ուտելը տեսնելիս՝ ուղղակի գայլի նման կրծտացնում էր ատամները՝ ինձ սարսափեցնելով զանազան կերակրեղէնի քանակների նկարագրութեամբ, կերակրեղէնի, որ նա պատրաստ էր կլանելու։ Մի քանի ժամանակից ի վեր նա սկսել էր յիշել կանանց մասին։ Ակզբում հարևանցօքէն, ափսոսանքի հառաջներով, ապա յաճախ, «արեւելցի մարդու» ընչափաղց ժպիտներով, նա վերջապէս հասաւ այն աստիճանի, որ այլև չէր կարող չասել ինձ մի որևէ գործնական-փիլիսոփայական կեղաստութիւն այս կամ այն հանգամանքի առիթով, երբ մօտովն անցընում էր կանանց սեռին պատկանող որևէ անձնաւորութիւն, բանի տարեկան և ինչ արտաքին էլ ունենար։ Նա ճառում էր կա-

նախց մասին այնպէս ազատ, առարկայի այնպիսի ճանաչողութեամբ և նայում էր նրանց վրայ այնպիսի զարմանալի-բաց տեսակէտով, որ ես միայն թքոտում էի... Մի անգամ փորձեցի նրան ապացուցել, որ կինը նրանից ոչ վատ արարած է, բայց տեսնելով, որ նա ոչ միայն վիրաւորում է ինձնից իմ հայեացքների համար, այլև պատրաստ է կատաղութեան համնել այն ստորացման համար, որին նրա կարծիքով՝ ես ենթարկում էի նրան, — թողեցի փորձերս մինչև այն ժամանակ, երբ նա կուշտ կլինի:

Մենք կերչ էինք գնում էլ ոչ ծովագով, այլ դաշտավայրով՝ ճանապարհը կարծելու դիտումով, և մեր պարկում կար ընդամենը երեք զբվանքանոց մի գարի բողոն, որ գնել էինք մի թաթարից մեր վերջին շահանոցով։ Շաքրօի՛ գրւղերում հաց մուրալու փորձերը ոչ մի հետևանքի չհասցրին, ամենուրեք հակիրճ պատասխանում էին. «Ճեզպէսները շատ կան»... Այդ մեծագոյն ճշմարտութիւն էր. իրաւ, այդ ծանր տարին անչափ շատ էին մի կառը հաց որոնողները։

Իմ ուղեկիցը հանդուրժել չէր կարող «սովեալներին» — ողորմութիւն ժողովելու մէջ իր մրցակիցներին։ Նրա կենսական ուժերի պահստը՝ չնայելով ճանապարհի դժւարութեան և վատ մննդառութեան՝ թոյլ չէր տալիս նրան ընդունելու այնպիսի մաշւած և խղճալի տեսք, որով մուրացկաններն

արդարե կարող էին պարծենալ որպէս մի տեսակ կատարելութեամբ. և նա նրանց գեռ հեռուից տեսնելիս՝ ասում էր.

— Էլլ՛ գալիս են: Թիւհ, թիւհ, թիւհ: Ի՞նչ են ման մալիս: Ի՞նչ են գալիս: Միթէ Ռուսաստանը նեղ է: Զեմ հասկանում! Ռուսաստանում շատ տխմար է ժողովուրդը:

Եւ երբ ես բացատրում էի նրան այն պատճառները, որոնք ստիպել էին տխմար ուու ժողովրդին Դրլիմում շրջել հաց մուրալու նպատակով, նա անվստահութեամբ գլուխն օրօրելով՝ առարկում էր.

— Զեմ հասկանում: Ի՞նչպէս կարելի է... Մեղ մօտ Վրաստանում այդպիսի անմտութիւններ չեն լինում!

Մենք կերչ հասանք ուշ երեկոյեան և ստիպւած եղանք գիշերելու նաւահանգստի՝ նաւից ափը տանող կամրջիկների տակ։ Մեղ անհրաժեշտ էր թագնեւել. մենք գիտէինք, որ մեր զալուց քիչ առաջ բոլոր աւելորդ մարդկի — բօսեակները կերչից դուրս էին հանւած, և վախում էինք, որ ստիպանատուն կընկնենք. իսկ որովհետև Շաքրօն ճանապարհորդում էր ուրիշի անցագրով, ուստի այս հանգամանքը կարող էր մեր վիճակի մէջ լուրջ բարդութիւններ առաջ բերել:

Նեղուցի ալիքներն ամբողջ գիշերն առատութեամբ ողողում էին մեղ ցոլքերով, և լուսաբացին մենք դուրս եկամք կամը-

Ջիկների տակից թրջւած ու փէտացած։
Ամբողջ օրը շրջեցինք ծովափին, և բոլորն,
ինչ որ աջողւեց մեզ վաստակել, մի հատ
երկուշահանոց էր, որ ես ստացել էի մի
տէրտէրակնից, որի մի պարկ սեխը շուկա-
յից տուն էի տարել։

Այժմ հարկաւոր էր նեղուցով անցնել
Տաման։ Ոչ մի մակոյկատէր չէր համաձայ-
նում ընդունել մեզ իբրև մակոյկավար միւս
ափն անցնելու համար, որքան էլ որ խըն-
դրեցի։ Բոլորը գրգռւած էին բօսեակների
դէմ, որոնք մեր գալուց քիչ առաջ այդտեղ
շատ սիրագործութիւններ էին արել, իսկ
մեզ ոչ անհիմնապէս նրանց դասից էին հա-
մարում։

Երբ հասաւ երեկոն, ես՝ անաջողութիւն-
ներիս և ողջ աշխարհի վրայ չարացած լի-
նելուց՝ վճռեցի բաւական վտանգաւոր մի
բան բռնել և գիշերը հասնելուն պէս ի կա-
տար ածեցի այս։

V

Գիշերը ես ու Շաքրօն կամաց մօտեցանք
մաքսային նաւահանգստին, որի մօտ երեք
մակոյկ կար՝ ծովափնեայ քարէ պատում
ամբացրած օղակներից շղթաներով կապած։
Մութ էր, փչում էր բամին, մակոյկներն
ընդհարում էին իրար, շղթաները շառաչում
էին... Եւ ինձ համար հեշտ ու յարմար էր
տեղահան անել օղակն ու հանել քարից։

Մեզնից վեր հինգ արշինաչափ տարա-
ծութեան վրայ ման էր գալիս մաքսային զին-
որ պահապանը և ատամների արանքով
սուլում էր։ Երբ նա մեզնից մօտիկ կանգ էր
առնում, ես ընդհատում էի աշխատանքս,
բայց դա աւելորդ զգուշութիւն էր. նա չէր
կարող ենթադրել, թէ մինչև կոկորդը ջրի
մէջ մարդ կայ նստած՝ ալիքից քշւելու վը-
անգին ենթարկելով։ Առանց այն էլ շը-
թաներն անընդհատ շառաչում էին և առանց
իմ օգնութեան։ Շաքրօն արդէն ձգւել էր
մակոյկի յատակին և ինձ ինչ-որ մի բան
էր շնչում, որը ես չկարողացայ գլխի ընկ-
նել ալիքների աղմուկի պատճառով։ Օղակը
ձեռներում էր... Ալիքը խլեց նաւակը և
միանգամից նետեց նրան ափից հինգ սաժէն
հեռու։ Ես բռնել էի շղթայից և լողում էի
նաւակի հետ, յետոյ մոտյ մէջը։ Մենք հա-
նեցինք երկու ծածկոյթային տախտակ և
թիակների տեղակ նրանց ամբացնելով թիա-
տեղերում՝ ճանապարհ ընկանք...

Մեզնից վեր ամպերն էին թռչում, մեզնից
վար ալիքներն էին դէս-դէն ընկած, և
Շաքրօն ցուուկին (նաւաքթին) նստած՝ մերթ
կորչում էր աչքից՝ նաւաքթի հետ միասին
ջրային խորխորատների տակն անցնելով,
մերթ բարձրանում էր ինձնից վեր և գոռա-
լով՝ թրմփում համարեա ինձ վրայ։ Ես նրան
խորհուրդ տեի տեղը պինդ նստել և չգորգո-
ռալ, եթէ չէ ուզում, որ՝ պահապանը լսէ։ Այն

ժամանակ նասուս կացաւ: Ես նրա երեսի
տեղ տեսնում էի մի ճերմակ բիծ: Նա բոլոր
ժամանակ զեկն էր բռնած: Մենք ժամանակ
չունէինք մեր գերերը փոխելու և վախում
էինք նաւակի: միջով մի տեղից միւս տեղն
անցնել: Ես բարձր ասում էինրան, թէ ինչ
դիրք տալ նաւակին, և նա խոյն ինձ
հասկանալով՝ անում էր ամեն բան այնպէս
արագ, որ կարծես թէ հէնց նաւաստի էր
ծնւել: Թիակներ փոխարինող աախտակնե-
րը քիչ էին օգնում ինձ և միայն ձեռներիս
կոշտերն էին հարում: Քամին փշում էր հա-
կառակ, և ես ըիչ էի հոգում այն մասին,
թէ ուր է տանում մեղ՝ աշխատելով միայն,
որ նաւաքիթը դէպի նեղուցն ուղղաձիգ լի-
նի: Դա հեշտ էր անել, որպիծեակ դեռ երե-
ւում էին կերչի կրակները: Ալիքները երևում
էին մեզ նաւեզրերի վրայով և զայրագին
վշշում էին՝ իբար ընդհարւելով. քանի շատ
էինք դէպի նեղուցը տարւում, այնքան ա-
լիքներն աւելի ուժգին ու աւելի աղմկող էին
գառնում: Արդէն լսում էր մի ինչոր մոլն-
չին, վայրենի, ահարկու... իսկ նաւակը
շարունակ տարւում էր աւելի ու աւելի տ-
րագ, շատ դժւար էր դարձել ընթացքի
ուղղութիւնը պահպանել: Մենք մի գլուխ
գորտում էինք խոր վերի մէջ և վեր էինք
թոշում ջրային բլուրները, խոկ գիշերն ա-
ւելի ու աւելի էր մթնում, և ամպակոյտերն
աւելի էին ցած իջում: Նաւակիթի վրայով

երկացող կրակները կորան խաւարի մէջ, և
այն ժամանակ սարսափելի դարձաւ: Թւում
էր, թէ կատաղի ջրի այդ տարածութիւնն
արդէն էլ սահմաններ չունէր: Ոչինչ չէր ե-
րեւում, բացի նաւակն ընդպառաջ թռչող ա-
լիքներից: Այդ ալիքները ձեռիցս խլեցին
մի տախտակը, միւսն էլ ինքս գցեցի յատա-
կը և երկու ձեռով ամուր բռնեցի նաւեզը-
րերից: Շաքրօն վայրենի ձայնով վայում էր
ամեն անգամ, երբ նաւակը վեր-վեր էր թռո-
չում: Զայրացած տարերքով պատած և նրա
ալմուկից խլացած ես ինձ գդում էի խղճալի
և անզօր այդ մույլի մէջ: Սիրսս անյոյս,
չարյուսահատութեամբ համակւած՝ ես տես-
նում էի շուրջս զարհուրելի միօրինակու-
թիւն—ամենուրեր միայն այդ ալիքները
ձերմակ բաշերով, որոնք ցրում ու աղիցոլ-
քեր էին գառնում, և ինձնից վեր ամպակոյ-
տերը, խիտ, թաւոտ, նոյնպէս նման ալիք-
ներին... ես հասկանում էի միայն մի բան,
այն ամենն, ինչոր կատարւում է շուրջս,
կարող է լինել անչափ ուժգին և աւելի ահ-
ռելի, և ես բարկանում էի, որ նա իրան
պահում է և չէ ուզում այդպէս լինել: Մահն
անխուսափելի է: Բայց անհրաժեշտ է այդ
անաշառ, ամեն բան ծանրութեթև անող
օրէնքը մի որևէ բանով պաճուճել, որտե-
հետեւ նա չափազանց է ծանր ու բիրտ: Եթէ
որ ինձ վիճակւած լինէր այրւել կրակում
կամ խեղղւել ճահճային մամուռի մէջ, ես

կաշխատէի ընտրել առաջինը — էլի մի տես
սակ աւելի վայելուչ է...

— Պարզե՞նք առագաստը, — գոչեց Շաքրօն:
— Ո՞ւր է նա, — հարցրի ես:
— Իմ չեքմէնս շինենք առագաստ...
— Գցիր այստեղ: Կեկը բաց չթողնես...
Շաքրօն սուսուփուս դիրար եկաւ նաւաս
քըթի վրայ:
— Բնմիր...

Նա գցեց դէպի ինձ իր չեքմէնը: Յա-
տակի վրայով մի կերպ փորսող տալով՝ ես
նաւածածկոյթից պոկեցի մի տախտակ ևս,
հաստ շորի թեկ հազցրի նրան, նաւակի
նստարանի մօտ տնկեցի, ոտներս դէմ տւի
և վերցրի միւս թեն ու փեշը թէ չէ, երբ
մի բոլորովին անսպասելի բան պատահեց...
Նաւակը սովորականից շատ բարձր ցատ-
կեց, ապա ցած թռաւ, և ես ինձ ջրի մէջ
տեսայ՝ մի ձեռումս պահած չեքմէնը, իսկ
միւսով բռնած թոկից, որ պատ էր տւած
նաւեղրի դրսի կողմից: Ալիքները գոռոցով
ցատկում էին գլխիս վրայով, և ես կուլ
էի տալիս դառնաղի ջուրը: Նա լցւեց ա-
կանջներս, բերանս, քիթս... Զեռներով ա-
մուր բռնած թոկից՝ ես բարձրանում ու
իջնում էի ջրի վրայ՝ գլուխս թրիկացնելով
նաւեղրին և չեքմէնը նաւակի յատակը գցե-
լով՝ աշխատում էի ինքս էլ թոշես նաւակը:
դմ տասնեակ ճիգերից մէկն աջողւեց, ես

նաւակը հեծայ և իսկոյն տեսայ Շաքրօնին,
որը գլուրուում էր ջրի մէջ՝ երկու ձեռով
բռնած նոյն պարաններից, որ ես հէնց նոր
բաց էի թողել: Բանից երևաց, որ նրանք
պատում էին ամբողջ նաւակի շուրջը՝ անցկա-
ցըրւած լինելով եղրերին ամրացրւած երկա-
թէ օղակներով:

— Կենդանի ես — գոչեցի ես նրան:

Այդ վայրկենին նա ջրից բարձր ցատկեց
և նոյնպէս ննտեց նաւակի յատակը: Ես
նրան բռնեցի, և մենք դէմառողէմ ելանք,
միասին: Ես նստած էի նաւակի վրայ՝ ինչ-
պէս ձիի, ոտներս գցած թոկերի մէջ ինչպէս
ասպանդակների, — բայց այդ անյուսալի էր,
ամենաչնչին ալիքը կարող էր հեշտութեամբ
վայր գլուրել ինձ թամբից: Շաքրօն ձեռնե-
րով պինդ բռնեց ծնկներիցս և գլուխը դէմ
տւաւ կրծքիս: Նա ամբողջովին դողում էր,
և ես զգում էի, թէ ինչպէս էին դողովում
նրա ծնոտները: Պէտք էր մի բան անել: Յա-
տակը լարձուն էր, կարծես իւղ քսած լինէր:
Ես Շաքրօնին ասացի, որ նա նորից ջուրը
մտնէ և բռնէ մի նաւեղրի թոկից, իսկ ես
նոյնը կանեմ միւս նաւեղրի վրայ: Պատաս-
խանի տեղ նա սկսեց գլխով հրհրել կրծքիս:
Ալիքները վայրենի պարով շարունակ ցատկը-
տում էին մեր վրայով, և մենք հազիւհազ
էինք կարողանում տեղներս մնալ. մի ոտս
սաստիկ կտրում էր թոկը: Ամենուրեք, ուր
միայն տեսանելի էր, գոյանում էին ջրի

բարձր բլուրներ և աղմկով անյայտանում: Ես ասածս կը ինսեցի Շաքրօխն արդէն հրամանի տօնով: Նա աւելի ուժգին սկսեց զլսով հարու տալ կրծքիս: Յապաղել չէր կարելի: Ես ինձնից պոկեցի նրա ձեռները մէկը միւսի յետեց և սկսեցի նրան ջուրը հրել աշխատելով, որ նա թոկն իր ձեռը զցի: Եւ այդտեղ կատարեց մի բան, որ ինձ ամենից աւելի վախեցրեց այդ գիշեր:

—Խեղդում ես ինձ, —շնչաց Շաքրօն և մտիկ տաւաւ դէմքիս:

Այդ իսկապէս զարհուրելի՛ էր: Զարհուրելի էր նրա հարցը, աւելի՝ զարհուրելի՛ նրա հարցի տօնը, որի մէջ հնչում էր և՛ երկչոստ հնազանդութիւն Փակտին, և՛ երկչոստ ինդիր ինայելու, և՛ վերջին հառաջանք մի մարդի, որը կորցրել է ճակատագրական վախճանից խուսափելու յոյսը: Բայց աւելի սարսափելի՛ էին մեռելային-գունատ թրջւած դէմքի վրայի աչքերը...

Ես գոչեցի նրան,

—Պինդ կաց, —և ինքս մտայ ջուրը՝ թուկից բոնած: Ուստ խփեց մի բանի, և առաջին վայրկենին ցաւի պատճառով ոչինչ չկարողացայ հասկանալ: Բայց յետոյ հասկացայ: Մէջս մի ջերմութիւն քոնկւեց, ես հարբեցի և զգացի ինձ այնպէս ուժեղ, ինչպէս երբէք...

—Գետին, —գոչեցի ես:

Գուցէ միծ ծովագնացները, որոնք դաել

են նոր երկրներ, նրանց տեսնելիս՝ այս բառ որ գոչել են աւելի միծ զգացմունքով, քան թէ ես, բայց կասկածում եմ, որ նրանք կարողացած լինէլին ինձնից աւելի բարձր գոչել: Շաքրօն ճշաց, և մենք ջուրը թափւեցինք: Բայց շուտով հիասթափւեցինք երկուս էլ, ջուրը դեռ մինչև կրծքներս էր հասնում, և ոչ մի տեղ չէլին երևում ցածաք ափի աւելի էական նշաններ: Ալիքներն այս-տեղ աւելի թոյլ էին և արդէն չէլին ցատկառում, այլ յամրօրէն վլատրւում էին մեր վրայով: Բարեբախտաբար ես ձեռքիցս բաց չէի թողել մակոյկը: Եւ ահա ես նրա մի կողի մօտ կանգնեցի, Շաքրօն միւս կողի, և փրկարար թուկերից բոնած՝ սկսեցինք զգուշութեամբ գնալ ինչ-որ մի տեղ՝ մակոյկը քաշելով մեր յետեկից:

Շաքրօն ինչ-որ փնթփնթում ու ծիծաղում էր: Ես անհանգիստ մտիկ էի անում շուրջս: Մութն էր: Յետեկից և մեզնից դէպի աջ ալիքների վշշոցն աւելի ուժգին էր, առաջից դէպի ձախ՝ աւելի մեղմ: մենք գնացինք դէպի ձախ: Գետինն ամուռ էր, աւազուտ, բայց էլի փոս-փոս, երբեմն յատակին չէինք կալչում և թիվալարում էինք ոսներով ու մի ձեռով՝ միւսով բոնած նաւակից, երբեմն ջուրը միայն մինչև ծնկներս էր հասնում: Խոր տեղերում Շաքրօն վայում էր, իսկ ես գողում էի սարսափահար: Եւ յան-

կարծ՝ փրկութիւն — մեր առջև կրակ էր փայտում...

Շաքրօն գոռաց, որքան ուժումը կար, բայց ես շատ լաւ էի իմանում, որ նաւակն արքունական է, և իսկոյն հարկադրեցի Շաքրօնին յիշել այդ: Նա սուս արաւ, բայց մի քանի ըսպէցից յետոյ լսեցին նրա հեկեկանքները: Ես չկարողացայ նրան հանգըստացնել, միջոց չկար:

Զուրը քանի զնում՝ բշանում էր... մինչև ծնկներս... մինչև ճիտքս... ջուր այլևս չկայ: Ես ու Շաքրօն էլի քարշ էնքը տալիս արքունական նաւակը, բայց ոյժներս հատան, և բաց թողեցինք: Մեր ձանապարհին ընկած էր մի սև կոճդ. մենք ցատկեցինք նրա վրայով — և երկուսս էլ ոտարորիկ ընկանք մի ծակող խոտի մէջ: Այդ ցաւ էր պատճառում և երկրի կողմից հիւրասէր բան չէր, բայց մենք ուշադրութիւն չգարծրինք և վաղեցինք դէպի կրակը: Նա մեզնից մի վերստ հեռաւորութեան վրայ էր և զւարթ պլալալով՝ ասես ծիծաղում էր մեր դէմանդիման, իսկ խուռարն ահոելիօրէն երերում էր նրա շուրջը...

VI

... Երեք ահագին, բրդբրդոս շներ խաւարի միջից զուրս պրծնելով՝ մեզ վրայ յարձակեցին: Շաքրօն, որ մինչև այդ ժա-

մանակ ջղաձգաբար հեկեկում էր, սարսափեալի ճաց և գետին ընկաւ: Ես թաց չէրմէնը շպլանցի շների վրայ և կրացայ՝ ձեռքով որոնելով քար կամ փայտ: Ոչինչ չկար, միայն խոսն էր ձեռներս ծակոտում: Շները միահամուս մեկ վրայ էին պլրծնում: Ես սուլում էի, որքան ուժում կար, երկու մատս բերանում դրած: Նրանք ետ քաշւեցին, և իսկոյնսեթ լսեց վաղող մարդկանց ուսների տրոփիւն ու խօսակցութիւն:

Մի քանի ըսպէցից յետոյ մենք արդէն խարոյկի մօտ էինք, ոչխարածների շրջանում, որոնք հագած էին ոչխարի մորթիներ՝ բուրդը գրափրած:

Երկուսը նստած էին գետնին և ծխում էին՝ ծուխն ահագին քուլաներով զուրս թողնելով. մինը — բարձրահասակ, խիտ սև միքով և զաղախի բարձր փափաղով — կանգնած էր մեր յետել՝ արմատի ահագին կոմբալ ունեցող փայտին յենած. չորրորդը, մի ջահիւ շէկ տղայ, օգնում էր լացող Շաքրօնին շորերը հանելու: Մեզնից հինգ սաժէնաչափ հեռու երկլիրը մեծ տարածութեամբ ծածկւած էր ինչ-որ թանձր, մոխրագոյն և ալիքածե, զարնան՝ արդէն հալւել սկսող ձիւնի նման մի բանի շերտով: Միայն երկար և անընդհատ նայելուց կարելի էր ջոկել իրար կիպ սեղմած ոչխարածների առանձին կերպարանքներ: Այդաեղ նրանցից կար մի քանի հազար, քնից և գիշերւայ խաւարից

կիպ սեղմւած, դարձած խիտ, տաք և հաստ
շերտ, որ ծածկում էր դաշտավայրը:
Երբեմն նրանք մկնում էին ողբածայն ու
ահալի...

Ես չէքմէնը չորացնում էի կրակի վրայ
և ոչխարածներին ասում էի ամեն բան ճշշ-
մարտապէս. պատմեցի և այն միջոցի մա-
սին, որով ձեռք բերի նաւակը:

—Ո՞ւր է նա, ին նաւակը, հարցրեց ինձ-
նից խոժոռ ալեոր ծերունին, որ աշըն ինձ-
նից չէր հեռացնում:

Ես ասացի նրանց:

—Գնա, Միխան, մէկ մտիկ տուր...

Միխալը, այն սեամիրուքը, փայտն ու-
սին զցեց և ուղերդեց գէպի փետափի:

Շաքրօն, որ ցրախց գողղողում էր, ինձ
խնդրեց տալ իրան տաք, բայց գեռ թաց
չէրմէնը, սակայն ծերն ասաց.

—Ապասիր, առաջ մէկ վաղվիր, որ արիւ-
նըդ տաքացնես: Վաղիր խարոյկի շուրջն,
ապան:

Շաքրօն սկզբից չհասկացաւ, բայց յետոյ
յանկարծ պոկ եկաւ տեղից և մերկ սկսեց
պարել մի աներեակայելի վայրենի պար,
խաղաղնդի նման սստոստալով խարոյկի վը-
րայով, պատելով մի տեղում, ոտները գետ-
նին արոփելով, ձեռները դէս-դէն թափ տա-
լով: Դա մի չափազանց ծիծաղելի պատկեր
էր: Երկու ոչխարածները գետնին թաւալում
էին՝ ամբողջ կոկորդով ծիծաղելով, իսկ ծե-

րը շուրջ, անյոյդ դէմքով աշխատում էր թա-
թերով ծափ տալ պարի տակափ համեմատ,
բայց չէր կարողանում հանգը գանել, մտիկ
էր տալիս Շաքրօնի պարին՝ վլուխն օրօրեկով
ու բեղերը շարժելով և թանձրամած բասով
շարունակ ձայն էր տալիս...

—Հայ-հա: Է՛ղակս, Էղակս: Հայ-հա: Ծափ,
ծափի:

Խարոյկի կրակով լուսաւորւած Շաք-
րօն օգի նման գալարում էր՝ ամենաբազ-
մազան պողաներ բռնելով, ցատկում էր մի
ոտի վրայ, յորդոր մանր տրոփիւններ էր
հանում երկու ոտներով, և կրակի լուսով
փայլող նրա մարմինը ծածկում էր քրտնքի
խողը կաթիւներով: Այդ կաթիւները կրա-
կից թւում էին կարմիր, ինչպէս արիւն:

Այժմ արդէն բոլոր երեք ոչխարածներն
էլ ծափ էին տալիս, իսկ ես ցրախց գողղով
ցամաքեցնում էի իսձ խարոյկի մօտ և
մտածում, որ իմ անցկացրած արկածը բախ-
տաւոր կտարձնէր Կուպերի և Փիւլ-Վիրնի
մի որեէ երկրպագւի. կայ և նաւարկու-
թիւն, և հիւրասէր բնիկներ (աբորիգեններ),
և վայրենիների պար խարոյկի շուրջը:

Ահա Շաքրօն արդէն նստած էր գետնին՝
չէքմէնով վաթաթեւած և ուտում էր՝ մերթ-
մերթ նայելով ինձ իր սկ աչքերով, որոն-
ցում կայծկլառում էր մի բան, որը մէջս ա-
նախործ զգացում էր զարթեցնում: Նրա
շորը չորանում էր՝ խարոյկի մօտ հողում

ցցած վայտերից կախած: Ինձ էլ հաց և
աղով արած ճարպ տւին ուտելու:

Միխալը եկաւ և լուս նստեց ծերի կող-
քին:

—Հը, —հարցրեց ծերը:

—Նաւակը կայ, —հակիրճ պատասխա-
նեց Միխալը:

—Զուբը չի՞ քշիւ:

—Չէ:

Եւ բոլորը լուցին՝ նորից դիտելով ինձ:

—Հը, —հարցրեց Միխալն՝ իսկապէս
առանց մէկնումէկին դիմելու, —տանել սը-
րանց ստանիցան (գիւղը) ատամանի (գիւ-
ղապետի) մօտ: —Գուցէ աւելի լու է ուղ-
ղակի մաքսային ծառայողների մօտ տանել:

Միխալին ոչ ոք չէր պատասխանում:
Շաքրօն իրան համար ուտում էր ու սուս էր:

—Կարելի է ատամանի մօտ տանել...
նոյնպէս և մաքսային ծառայողների մօտ...
Դա էլ է լաւ, նա էլ, —ասաց ծերը՝ քիչ լուս
մնալով:

—Կաց, պապի... —սկսեցի ես:

Բայց նա վրաս ոչ մի ուշադրութիւն
չդարձրեց:

—Ուրեմն էղպէս: Միխալ: Են բանը...
նաւակն էնտեղ է:

—Բնը, էնտեղ է:

—Հը... զուբը չի՞ քշիւ:

—Ծը... չի քշիւ:

—Դէ թող էնտեղ էլ կիսայ... իսկ էզուց

մակոյկավարները կզնան կերչ և իրանց
հետ կվերցնեն կտանեն: Ի՞նչ կա յոր
չտանեն դատարկ նաւակը: Հը: Ուրեմն էղ-
պէս... իսկ հիմի գուը, զոչաղներ... բան...
ոնց է էն ինչը... Երկուսդ էլ չվախեցաք:
Զէ, բօթը... Կէս վերստ էլ անցած լինէիք,
ծովումը կլինէիք հիմի: Ի՞նչ կանէիք, ե-
թէ ծովն ընկնէիք: Հը: Երկուսդ էլ տակ
կանէիք երկաթի պէս: Կիսեղուէիք կդը-
նայիք:

Ծերը լսեց և սկսեց նայել վրաս՝ բե-
ղերում հեգնական ժպիտ:

—Ի՞նչ ես սուս կացել, այ տղա, —հարցը-
րեց նա ինձնից:

Ես ձանձրացել էի նրա դատողութիւն-
ներից, որոնց չհասկանալով՝ համարում էի
ծաղը մեղ վրայ:

—Ա՛յ, ականջ եմ դնում քեզ, —ասացի ես
բաւական բարկացած:

—Է՛, որ ի՞նչ, —հետաքրքրւեց ծերը:

—Է՛ն, ի՞նչ կայ, որ ի՞նչ լինի:

—Էլ ի՞նչ ես ինձ ձեռք դցում: Էդ ի՞նչ
կարգ է քեզնից մեծին ձեռք առնել:

Ես սուս կացայ:

—Բայց ուտել չի՞ս ուզում էլ, —շարու-
նակեց ծերը:

—Չեմ ուզում:

—Է՛ն, մի ուտիր: Զես ուզում—չես էլ
ուտիր: Բայց կարելի է ճանապարհի՞ հա-
մար հաց կվերցնես:

Եսուրախութիւնից վեր թռայ, բայց ի՞նձ
չմատնեցի:

— Ճանապարհի համար կվերցնէի... .

— ճանգիստ ասացի ես:

— ի՞նչ... Դէսուրեմն սրանց էնտեղ հաց
ու ճարպ տւէր ճանապարհի համար... Բայց
կարելի է ուրիշ էլ բան կայ, ինչ որ կայ,
նրանից էլ տւէր:

— Ուրեմն դրանք դնալու են, — հարցը եց
Միխալը:

Միւս երկուսն իրանց աչքերը ծերի վրայ
բարձրացրին:

— Բա էստեղ ի՞նչ պիտի անեն որ:

— Ախր մենք ուզում էինք ատամանի մօտ
տանել... կամ մաքսային ծառայողների...
— հիասթափւած ճանուցեց Միխալը:

Շաքրօն խարոյկի մօտ դիրար եկաւ և
դոււխը հետաքրքրութեամբ դուրս հանեց
չքրմէնից: Նա ճանգիստ էր:

— Սրանք ատամանի մօտ ի՞նչ գործ ունեն:
Անելու ոչինչ չունեն սրանք ատամանի մօտ
կարծեմ... Յետոյ արգէն նրա մօտ կդնան...
Եթէ ցանկանան:

— Իսկ նաւահին ինչպէս կլինի, — ձեռք չէր
քաշում Միխալը:

— Նաւահի, — հարցը եց ծերը: — Ի՞նչ է որ
նաւահի: Տեղն է:

— Տեղն է... — պատասխանեց Միխալը:

— Է, թող ուրեմն տեղը լինի: Իսկ
առաւօտեան այ իվաշկան կտանել նաւահ

հանգիստ, էնտեղից էլ կվերցնեն կտանեն
կերչ: Պրծաւ զնաց:

Ես ակնդէտ նայում էի ծեր ոչսարածին.
և չէի կարողանում գտնել մի ամենափոքրիկ
շարժում նրա ֆլեգմատիկ, արևառ ու քամհար
դէմքին, որի վրայով ոստոստում էին խա-
րոյկի ստւերները:

— Մի բան դուրս չգտայ յանկարծ... — սկը-
սեց մեղմանալ Միխալը:

— Թէ որ լեզուկ քեզ պահես, հաւատա,
որ ոչինչ չի լինիլ: Իսկ եթէ սրանց տանես
ատամանի մօտ, դա՞ ես կարծում եմ՝ որ լաւ
չի լինիլ թէ մեղ և թէ սրանց համար: Մեզ
հարկաւոր է մեր գործն անել, սրանց—
գնալ: — Է, հեռող տեղ էք գնալու, — հարցը եց
ծերը, թէ ես արդէն ասել էի նրան, թէ
որտեղ:

— Թիֆլիու:

— Ճանապարհ շատ կայ: Այ, ահենոնում
ես, իսկ ատամանը կը ոնի կպահի սը-
րանց. թէ որ պահի, սրանք երբ տեղ
կհասնեն: Ուրեմն աւելի լաւ է՝ թող գնան
իրանց քէֆին, ուր ուզում են: Հը:

— Ի՞նչ անենք: Թող գնան, — համաձայնե-
ցին ծերի լընկերները, երբ նա վերջացնելով
իր յամը խօսքերը՝ շրթուրքներն ամուր սեղմեց
և հարցական կերպով նայեց բոլորին՝ մատ-
ներով ոլորելով իր գորշ միրուքը:

— Դէ, ուրեմն Աստւած ձեղ հետ, տղերք,

—ձեռքով արաւ ծերը: —Իսկ նաւակը մենք
իր տեղը կուղարկենք: Ե՞նպէս է:
—Շնորհակալ եմ քեզնից, պապի, —դւ-

խարկս վերցրի ես:
—Ինչի՞ համար ես շնորհակալ:
—Շնորհակալ եմ, ապեր, շնորհակալ եմ,
—յուղած կրկնեցի ես:
—Ախր ինչի՞ համար ես շնորհակալ է:
Ա՝ յ զարմանալի բան: Ես ասում եմ—Աս-
տըւած ձեզ հետ, իսկ սա ինձ—շնորհակալ եմ:
Մըթէ դու վախում էիր, որ ես սատանային
ձեզ հետ կդնէի, հը^o:

—Մեղքս ի՞նչ թագցնեմ, վախում էի...
—ասացի ես:

—Օ՛...և ծերը վեր քաշեց յօնքերը:
—Ես ինչո՞ւ պէտք է մարդին վատ ճանա-
պարհի վրայ դնեմ: Հօ աւելի լաւ է որ ես
նրան այն ճանապարհը գցեմ, որով ես ինքը
եմ գնում: Կարելի է գեռ էլի կպատա-
հենք, ուրեմն ծանօթ կլինինք: Կարող է
պատահել, որ հարկաւոր կլինի իրար օդ-
նել... Ջօ շվեկի (ցտեսութիւն)...

Նա վերցրեց իր բրդոտ ոչխարենի գլխար-
կը և գլուխ տւաւ մեզ: Գլուխ տւին և նրա
ընկերները: Մենք հարցրինք Անապայի ճա-
նապարհն ու գնացինք: Շաքրօն մի բանի
վրայ ծիծաղում էր:

VII

—Ինչի՞ վրայ ես ծիծաղում,—հարցրի
նրանցից:

Ես հիացած էի ծեր ոչխարածից և նրա
կենսական մորալից, ես հիացած էի և լու-
սադիմի թարմ քամուց, որ փչում էր ուղիղ
մեր կրծքին, և այն բանից, որ երկինքը
մաքրւել է ամպերից, շուտով լուսանալու,
արեց ենիկու է պայծառ երկինքը, և փայլուն
գեղեցիկ օր է ծնւելու...

Շաքրօն խորամանկութեամբ աչքով ա-
րաւ ինձ և տւելի ուժգին քրքջաց: Ե՛ս էլ
էի ժպտում՝ լսելով նրա ուրախ, առոյդ ծի-
ծաղը: Ոչխարածների խարոյկի մօտ մեր
անցկացրած երկու-երեք ժամը և համեղ հայն
ու ճարպը յոգնեցուցիչ ճանապարհորդու-
թիւնից թողել էին միայն մի թեթև ոսկրա-
ցաւ, բայց այդ զգացումը չէր խանգարում
մեր ուրախութիւնը:

—Է՛, ի՞նչ ես ծիծաղում: Ուրախ ես, որ
կենդանի ես մնացել, հմտ կենդանի և գեռ
կուշտ էլ:

Շաքրօն բացասաբար շարժեց գլուխը,
կողքիս խիֆեց արմունկով, բերանով ծամա-
ծըսութիւն արաւ, նորից քրքջաց և վերջա-
պէս ասաց իր կոտրտած լեզւով.

—Զե՞ս հասկանում, թէ ինչո՞ւ է ծիծաղս
պալիս: Զէ՞: Իսկըն կիմանաս: Դիտէ՞ս, թէ

Ես ինչ պէտք է անէի, եթէ ինձ տանէին
այդ ատաման-տամօժանի մօտ: Զիս իմու-
նում: Ես քեզ համար կասէի՞ նա ինձ ու-
զում էր խեղդի: Եւ կսկսէի լաց լինել:
Այն ժամանակ ինձ կլսդային և բանտ
չէին նստացնիլ: Հասկանո՞ւմ ես:

Ես սկզբում ուզում էի այդ իրեկ կատակ
հասկանալ բայց աւաղ, նա կարողացաւ ինձ
համոզել, որ իր մտադրութիւնը լուրջ էր
եղած: Նա այնպէս հիմնաւոր ու պարզ
կերպով համոզում էր ինձ այդ բանում, որ
ես փոխանակ նրա վրայ կատաղելու այդ
պարզամիտ ցինիզմի համար՝ լցւեցի խորին
խղճահարութեան զգացմունքով գէպի նա: Ուրիշ լինչ կարելի է զգալ գէպի մի մարդ,
որն ամենափայլուն ժպտով և ամենաանկեղծ
տօնով պատմում է քեզ, որ ինքը մտադիր
էր քեզ սպանել: Ի՞նչ անել նրան, քանի որ
նա նայում է այդ արարքի վրայ՝ որպէս մի
սիրուն և սրամիտ բանի վրայ:

Ես սկսեցի տաքացած ապացուցել նրան
իր մտադրութեան բոլոր անբարոյականու-
թիւնը: Նա շատ պարզօրէն առարկում էր
ինձ, որ ես չեմ հասկանում նրա շահերը,
մոռանում եմ նրա ուրիշի անցաթղթով ալլրե-
լլ և այն, որ դրա համար նրա բանը վատ
կլինի...

Ցանկարծ մէջս մի դաժան միտք փայլեց,
—Կաց, —ասացի ես, —գուցէ դու հաւա-
տացած ես, որ ես ուզում էի քեզ խեղդել:

—Զէ... Երբ դու ինձ ջուրն էիր հրում
—հաւատում էի, երբ դու ինքդ մտար ջուրը
—չհաւատացի:

—Փառք Աստծու, —բացադանչեցի ես:
—Է՛, դրա համար էլ եմ չնորհակալ:

—Զէ, մի ասիր չնորհակալ եմ: Ես քեզ
կասեմ չնորհակալ եմ: Այստեղ խարոյկի
մօտ դու մրսում էիր, ես մրսում էի... Զէքմէ-
նը քոնն է: —Դու չպահեցիր քեզ համար: Դու
չորացրիր և ինձ տւիր այն: Խսկ դու
ոչինչ չվերցրիր: Ա՛յ, քեզ չնորհակալութիւն:
Դու շատ լաւ մարդ ես, ես հասկանում եմ:
Կդնանը Թիֆլիս, ամեն բանի փոխարէնը
կատանաս: Հօրս մօտ կտանեմ քեզ: Հօրս
կասեմ—այ, մարդ: Ուտացըն սրան, խմացը-
րնւ սրան, խսկ ինձ էշի հետ ախոռումը
կապիր: Ա՛յ ինչուչս կասեմ: Մեզ մօտ
կտարես, այգեպան կլինիս, գինի կխմես,
սիրտդ ինչ ուզի կուտես... ախ, ախ, ախ...
շատ լաւ կեանք կբաշես: Ուղղակի... Կեր,
խմիր ինձ հետ միասին մի գտաւթով...

Նա երկար ու մանրամանօրէն նկարա-
զըրում էր այն կեանքի համն ու հոտը, որ
պատրաստում էր ստեղծելու ինձ համար
Թիֆլիսում իրանց տանը: Խսկ ես նրա
զրոյցի ժամանակ մտածում էի այն մարդ-
կանց մեծ դժբախտութեան մասին, որոնք
զինւելով նոր մորալով, նոր ցանկութիւն-
ներով, մենաենակ առաջ են ընկել ու կորել
կեանքում և իրանց ճանապարհին հանդիւ-

պում են ուղեկիցների, նրանց համար խորթ, նրանց հասկանալու անընդունակ... ծանր է այդպիսի մենակների կեանքը... Նրանք անմոռենչ տարբեմ են օգումո Բայց նրանք տարբեմ են ինչպէս բարի հունդի սերմեր, թէպէտ և սակաւ են փթում արդաւանդ հողում...

Լուսանում էր՝ Ծովի հեռաւոր կողմերը փայլում էին վարդապոյն ոսկու պէս:

— Բունս տանում է, — ասաց Շաքրօն:

Մենք կանգ առանք: Նա պառկեց մի փոստ, որ փորել էր քամին չոր աւազի մէջ ծովափից ոչ հեռու, և գլուխը չեքմէնի մէջ փաթաթելով՝ շուտով քնեց: Ես նստել էի նրա կողքին և նայում էի ծովին:

Նա ապրում էր իր լայնարձակ կեանքով, և կարող շարժումով: Ալիքների խմբերն աղմուկով ափն էին թաւալում և փշրում էին՝ աւազին ընդհարւելով, իսկ աւազը թոյլ փշշում էր՝ ծծելով ջուրը: Առաջընթաց ալիքներն իրանց ճերմակ բաշերը թափ տալով՝ աղմուկով խփում էին ափին և նահանջում՝ նրանից ետ մղւելով, իսկ նրանց էլ հանդիպում էին ուրիշ ալիքներ, որոնք գալիս էին նրանց օգնութեան: Նրանք ամուր գրկախառնւելով փրփուրի ու ցոլքերի մէջ նորից էին ափը գլորում և ծծում նրան՝ ձգտելով իրանց կեանքի սահմաններն ընդլայնել: Հօրիզոնից մինչև ափը՝ ծովի ամբողջ տարածութեան վրայ՝ ծնուռմ էին այդ ճկուն

ու կորովի ալիքները և շարունակ գնում, գնում իրեւ մի խիտ զանգւած միմիանց հետ սերտ կապւած նպատակի միութեամբ..., Արևն աւելի ու աւելի պայծառ էր լուսաւորում նրանց շարքերը, և հեռաւոր ալիքները հօրիզոնում թւում էին բոսրային: Ոչ մի կաթիլ անհետ չէր կորչում ջրային զանգւածի այդ նսկայական շարժման մէջ, զանգւածի, որը ասես թէ ոգեշնչւած է մի գիտակցական նպատակով և անա հասնում է նրան այդ լայն, չափածոյ զարկերով: Գրաւիչ էր առաջընթաց ալիքների գեղեցիկ քաջութիւնը, ալիքների, որոնք ըմբոստութեամբ թոշում էին լոիկ ափը, և լաւ էր տեսնել, թէ ինչպէս նրանց յետեից խաղաղ ու միաբան գալիս է ամբողջ ծովը, հզօր ծովը, արգեն ծխածանի բոլոր գոյներով արեկից ներկւած և լի իր գեղեցկութեան և ոյժի զսպւած գիտակցութեամբ...

Հրւանդանի յետեկից՝ ալիքները պատեւ լով գուրս լողաց մի նսկայական շոգենաւ և ծանր ու մեծ օրօրւելով ծովի յուզւած ծոցում՝ սուրաց իր եզրերի վրայ կատաղութեամբ յարձակող ալիքների վրայով: Այդ նաւը, գեղեցիկ և հուժկու, որի մետաղը պալլում էր արեկից, մի ուրիշ անզամ գուցէ կարողանար մտածել տալ մարդկանց հպարտ ստեղծագործութեան մասին, որ շահագործում է տարերքը... Բայց իմ կողքին պառկած էր մարդ-տարերքը:

VIII

Մենք անցնում էինք թերեքի շրջանով:
Շաքրօն սաստիկ զգգուած ու պատառոր-
ւած էր և սատանայի պէս չարացած, թէն
արդէն ոչ քաղցած այդժամ, որովհետեւ բա-
ւական փող էինք վաստակում: Նա որեւէ
աշխատանքի անընդունակ դուրս եկաւ:
Մի անգամ փորձեց մի կալում յարդ տրմղել
և կէսօրից յետոյ հիւանդացաւ՝ փոցխով
թաթերին արիւնաներկ կոշտեր գոյացնե-
լով: Մի ուրիշ անգամ մենք մի դժնիկ էինք
շուռ տալիս, և նա քլունգով վզի կաշին
պլոկեց:

Գնում էինք շատ դանդաղ,—երկու օր
բանում էինք, մի օր գնում: Շաքրօն չափա-
զանց անգուստ կերպով էր ուտում, և չնոր-
հիւ նրա որովայնամոլութեան՝ ես ոչ մի կերպ
չկարողացայ այնքան փող ետ զցել, որպէս-
զի հնարաւորութիւն ունենամ հազնելու մի
բան առնել նրա համար: Իսկ նրա բոլոր
շորերը մի բազմութիւն էին զանազանակերպ
ծակերի, որոնք մի կերպ կապկպւած էին
զանազան գոյնի կարկատաններով:

Մի անգամ մի ստանիցայում նա իմ
պարկից համեց՝ նրանից ծածուկ մեծ դժւա-
րութեամբ ետ զցած ճինդ բուբլի և երեկո-
յեան դարձաւ այն տունը, որի բանջարանո-
շում ես աշխատում էի, հարբած և մի հաստ

լիկ դակախ-կնոջ հետ, որն ինձ այսպէս
բարեկաց:

—Բարեկ, անիծած հերետիկոս:

Իսկ երբ ես զարմացած այդպիսի մակա-
նունով՝ հարցրի նրանից, թէ ինչո՞ւ է ինձ
հերետիկոս անւանում, նա ապօմբով պա-
տասխանեց.

—Նրա համար, սատանա, որ տղային
արգելում ես սիրել կանանց սեռը! Միթէ
դու կարող ես արգելել քանի որ օրէնքը
թոյլատրում է... Անէծք դու...

Շաքրօն կանգնած էր նրա կողքին և
դրականապէս զլխով էր անում: Նա սաստիկ
հարբած էր և երբ որեւէ շարժում էր անում,
ամբողջովին ունատձեռից ընկած օրօրուում
էր: Նրա վարի շրթունքը կախ էր ընկած:
Մթագնած աչքերը նայում էին դէմքիս ան-
մըտօրէն-յամառաբար:

—Է՛, գնւ, ի՞նչ ես աչքերդ պլշել վրա-
ներս: Տներ նրա փողերը, —գոռաց դոչաղ
կինը:

—Ի՞նչ փողեր, ապշեցի ես:

—Տներ, տներ: Թէ չէ ես քեզ կտա-
նեմ զինորական կառավարչատուն! Տներ
այն հարիւր յիշուն բուբլին, որ նրանից
վերցրել ես Օդեսսայում:

Ի՞նչ անէի: Սատանայի կինը հարբած-
հարբած կարող էր իսկապէս զնալ զինո-
րական տունը, և այն ժամանակ գիւղական
իշխանութիւնը, որ խիստ է զանազան շրջիկ

անձերի վերաբերմամբ, կկալանաւորէր
մեզ: Ո՞վ գիտէ, թէ ինչ դուրս կդար այդ
բանտարկութիւնից ինձ ու Շաքրօի համար:
Եւ ահա ես սկսեցի քաղաքագիտորէն սիրա-
շահել այդ կնոջը, որ՝ ինարկէ՝ մեծ ճիգեր
հարկաւոր չեկան: Մի կերպ երեք շիշ գի-
նու օգնութեամբ ես նրան խաղաղացրի:
Նա ընկաւ գետին ձմերուկների մէջ և քննց:
Ես Շաքրօին պառկեցրի, իսկ միւս օրը
վաղ առաւոտեան ես ու նա դուրս եկանք
ստանիցայից՝ թողնելով կնոջը ձմերուկների
հետ:

Խմած լինելուց կիսահիւանդ, ճմլւած
և ուռած գէմքով՝ Շաքրօն ամեն լրոպէ թը-
քոտում էր և ծանր հառաջում: Ես փորձում
էի նրա հետ խօսակցել, բայց նա ինձ չէր
պատասխանում և միայն շարժում էր իր
թաւ գլուխը յոգնած ձիի պէս:

Օրը շոգանում էր, և խիտ ու բարձր,
համարեա մեր ուսերին հասնող խոտով ծած-
կւած խոնաւ հողի ծանր գոլորշիացում-
ներով լցւած էր օղը: Մեր շուրջն ամենու-
րեք տարածւած էր կանաչ թաւշէ ծովը
և գէպի տօթ երկինքն էր արձակում իր
հիւթալի բոյրը, որից մարդի գլուխ պտոյտ
էր գալիս...

Մենք գնում էինք մի նեղ շաւզով, որով
ետ ու առաջ էին սողում վոքրիկ կարմիր
օձեր՝ գալարւելով մեր ոտների տակ: Զորս
կողմը տիրող անդորրութիւնը քուն էր բե-

րում մեղ վրայ և զցում մի երազային
նիրհի մէջ: Մեր յետեւում երկնքով զան-
գաղ շարժում էին ամպակոյտերի սկ խիտ
շարքեր: Միանալով իրար հետ՝ նրանք ծած-
կեցին ողջ երկինքը մեր յետեւում, մինչդեռ
առաջներս ովարդ էր գեռես, թէկ արդէն
ամպերի պատառներն այնտեղ վաղեցին և
կայտառ դէպի առաջ քշեցին՝ առաջներս
կտրելով և աւելի ու աւելի խիտ ծածկելով
երկինքը: Հեռուում մի տեղ թնդում էր որո-
տը, և նրա վնթվնթող հնչիւններն աւելի
ու աւելի էին մօտենում: Անձրեի խոշոր
կաթիւններն սկսեցին թափել և հարւել
խոտին: Խոտը մետաղանման խշշում էր:

Տեղ չկար ապաստանելու: Ահա մութն
ընկաւ, և խոտի խշշոցը հնչեց թէկ աւելի
բարձր, բայց մի տեսակ վախեցած: Որոտը
թնդաց—և ամպերը գողլողացին՝ կապոյտ
կրակով համակւած: Խոշոր անձրել թափ-
եց յորդ-յորդ, և որոտի թնդոցները մէ-
կը միւսի յետեկից սկսեցին խրոխտ ու ան-
ընդմէջ դղրդալ ամայի գաշտավայրում: Քա-
մու և անձրեի հարւածներից կոացող խո-
տը պառկում էր գետնին և խշշում՝ թոյլ
հնչիւն հանելով: Եւ ամեն ինչ դողում էր,
ալեկոծւում: Շանթերը մարդի աչքեր գո-
ցելով՝ պատում էին ամպերը... Նրանց կա-
պոյտ վայլի մէջ հեռում երեսում էր մի
լեռնաշղթայ՝ շողալիս կապոյտ կրակներով,
արծաթագոյն ու սառը, իսկ երբ շանթերը

մարում էին, նա անյայտանում էր՝ կարծես
խաւար անդունդն էր գլուռում: Ամեն ինչ
որոտում էր, ցնցւում, ետ մզում հնչւնահ-
ըը և ծնում նրանց: Ասես երկինքը՝ պղտոր
ու վայրացած՝ կրակով էր որբում իր վրայի
փոշին ու ամեն-մի աղաղութիւն, որ բար-
ձրացել էր գէպի նա երկրից, և երկիրը
թւում էր թէ ցնցւում էր նրա ցասումից
սարսափած:

Շաքրօն մըթմըթում էր ինչպէս վախե-
ցած շուն: Իսկ ես ուրախ էի, ես մի տե-
սակ բարձրացիլ էի սովորականից՝ դիտելով
դաշտային մըրկի այդ հզօր մռայլ պատկե-
րը: Հրաշալի քաօսը զրաւում և հերոսական
արամագրութիւն էր ներշնչում՝ մարդի հո-
գին համակելով խրոխտ ու վայրենի մի
ներդաշնակութեամբ...

Եւ ես ցանկանում էի մասնակցութիւն
ունենալ նրանում, մի բանով արտայայտել
հոգիս լցւած գէպի արդ խորհրդաւոր ոյժը
հիացքի զգացումը, ոյժ, որ կործանում էր
խաւարն ու ամպերը... կապոյտ բոցը, որ
համակել էր երկինքը, թւում էր՝ թէ վառ-
ուում էր և իմ կրծքում. և ինչով կարող էի
ես արտայայտել իմ մեծ յուզմունքը և իմ
սքանչանքը բնութեան այդ փառահեղ պատ-
կերի առաջ... ես երգեցի—զիլ, ինչքան
ձայնում կար: Որոտը թնդում էր, շանթե-
ըը շողջողում էին, խոտը խշում էր, իսկ
ես երգում էի և ինձ զկում այդ բոլոր ձայ-

ների հետ միացած... Ես գժութիւն էի ա-
նում, այդ ներելի է, որովհետև ոչ ոքի վը-
նաս չէր համում, բացի ինձնից: Ես լցւած
էի ցանկութիւններով՝ որքան կարելի է՝
շատ ձեռք բերել և ծծել կենդանի ու կա-
րող գեղեցկութիւն և ոյժ, որ փոթորկում
էր ամայի դաշտում, և աւելի մօտ լինել
նրան... Փոթորիկը ծովում և մըրիկն ամայի
դաշտում!—ես չգիտեմ աւելի փառահեղ եւ
բևոյթներ բնութեան մէջ:

Եւ արդ, ես գոռում էի՝ խիստ հաւա-
տացած, որ այդպիսի վարմունքովս ոչ ոքի
չեմ անհանգստացնիլ և ոչ ոքի չեմ ստիպիլ
խիստ քննադատութեան ենթարկելու իմ ա-
րածը: Բայց յանկարծ ոտիցս ամուր քաշե-
ցին, և ես ակամայից նստեցի մի ջրալից
փոսում...

Երեսիս նայում էր Շաքրօն լուրջ ու կա-
տաղի աչքերով:

—Դու խելքդ թոցրել ես: Զի՞ս թոցրել:
Զի՞: Է՛, ուրեմն լո՞ր, մի՛ գոռար. ես կո-
կորդգ կալատում, հասկանում ես:

Ես ապշեցի և սկզբում հարցրի նրանից,
թէ նրան ինչով եմ խանգարում...

—Վախեցնում ես, հասկացար: Որոտը
որոտում է—Աստած է խօսում, իսկ զու-
գոսում ես... Քեզ ինչացո՞ւ ես կարծում:

Ես նրան յայտնեցի, որ իրաւունք ունեմ
երգելու, եթէ ցանկանում եմ, ինչպէս է
նա:

— Իսկ ես չեմ ուզում, — կարուկ կերպով
ասաց նա:

— Մի երգիք, — համաձայնեցի ես:

— Դու էլ մի երգիք, — խստութեամբ ներ-
շընչում էր ինձ Շաքրօն:

— Ոչ, աւելի լաւ է ես կերպեմ...

— Լսիր, դու ի՞նչ ես կարծում, — զայրա-
ցած խօսեց Շաքրօն: — Ո՞վ ես դու, դու տուն
ունեմ, հայր ունեմ, ազգականներ ունեմ,
հող ունեմ: Ինչացու ես դու աշխարհիս ե-
րեսին: Դու մարդ ես, կարծում ես: Էդ ես
եմ մարդ: Ես ամեն բան ունեմ... — Նա խփեց
իր կրծքին: — Ես իշխան եմ... Իսկ դու...
դու ոչինչ ես: Ոչինչ չունես: Իսկ ինձ ճա-
նաչում է թութայինը, Թիֆլիսը... Հասկա-
նում ես: Դու ինձ հակառակ մի գնար: Դու
ինձ ծառայում ես: — Գոհ կլինիս: Ես քեզ
կհատուցանեմ տանիապատիկը: Դու ինձ
Քպէս ես անում: Դու ուրիշ բան անել չես
կարող, դու ինքդ էիր ասում, որ Աստած
հրամայել է ծառայել ամենքին առանց վար-
ձատրութեան: Ես քեզ կպարզեատրեմ:
Ինչու ես դու ինձ չարչարում, բաներ ես
սովորեցնում, վախեցնում ես: Ուզում ես,
որ ես էլ էնպէս դաւնամ, ինչպէս դժւ: Դա
լաւ չէ: Զէ կարելի իրան նման դարձնել մի ու-
րիշին!.. Եխ, Եխ, Եխ... թիւն, թիւն...

Նա խօսում էր, չմփչմփացնում, ֆոռացը-
նում, հառաջ քաշում... Ես նայում էի նրա
դէմքին՝ զարմանքից բերանս բաց: Նա՝ ինչ-

պէս երկում է՝ առաջն էր թափում բոլոր վըր-
դովմունքները, վիրաւորանքները և ինձնից
ունեցած անբաւականութիւնները, որ գիզել
էր իր մէջ մեր ճանապարհորդութեան ամ-
բողջ ժամանակ: Աւելի խորը համոզելու հա-
մար նա մատով խփում էր կրծքիս և ուսերս
շարժում, իսկ աւելի ուժզին տեղերում՝
ամբողջ մարմնով վրաս էր գալիս: Մեզ
թրջում էր անձրեւ, մեր վերեն անընդ-
հատ թնդում էր որոտը, և Շաքրօն՝ որպէս-
զի ճայնը լսեմ՝ գոռում էր, որքան ուժումը
կար:

Իմ դրութեան տրագիկօմիզմն աւելի ու
աւելի պարզ երեաց իմ առաջ և ինձ ստի-
պեց՝ որքան ոյժ ունէի՝ քրքջալ...

Շաքրօն թքելով՝ երեսը դարձրեց ինձնից:

IX

... Որքան աւելի էինք մօտենում Թիֆ-
լիկին, այնքան Շաքրօն աւելի էր դառնում
կենտրոնացած ու մոայլ... Ինչոք նոր բան
էր երեսում նրա նիհարած, բայց էլի ան-
շարժ դէմքին: Վլագիկավկազից ոչ հեռու
մենք մտանք մի չէրքէզեան առու (գիւղ) և
այնտեղ վարձւեցինք սիմինդը քաղելու:

Երկու օր բանելով չէրքէզների մէջ, ո-
րոնք համարեա չէին խօսում ուսերէն և ան-
դաղար ծիծաղում էին մեզ վրայ ու հայ-
հոյում մեզ իրանց լեզով, մենք վճռեցինք

առւլից հեռանալ՝ առւլցիների դէպի մեզ
աւելի ու աւելի աճող թշնամական վերաբեր-
ութեանքից վախեցած։ Առւլից տաս վերսաս-
չափ հեռացել էինք, երբ Շաքրօն յանկարծ
դուրս քաշեց ծոցից լէզգիական ըխելի մի
փաթեթ և հրձանքով ցոյց տւառ ինձ բա-
ցագանչելով։

—Ել հարկաւոր չէ բանել։ Կծախենք
—ամեն բան կառնենք։ Հերիք կանի մինչև
թիֆլվուզ։ Հասկանում ես։

Ես վրդովել էի կատաղութեան աս-
տիճանի և քիսէյը խլելով՝ նետեցի մի կողմ
ու ետ մտիկ տւի։ Զերքէզները հանաք-
մասխարութիւն չփառեն։ Դրանցից ըիչ ա-
ռաջ մենք դագախներից լսել էինք այսպիսի
պատմութիւն։ մի բօսեակ՝ հեռանալիս այն
առւլից, ուր բանել էր, վերցրել էր տարել
մի երկաթէ գդալ։ Զէրքէզները յետեցից
հասել էին, խուզարկել, գտել նրա մօտ այդ
գդալը և փորը խանչալով պատռելով՝ գդալը
խորը դրել էին նրա վէրքի մէջ, իսկ յետոյ
հանգիստ հեռացել՝ թողնելով նրան դաշտա-
վայրում, որտեղից դագախները նրան տա-
րել էին կիսակենդան։ Նա էր այս պատմել
նրանց և ստանիցայի ձանապարհին մեռել։
Դազախները յաճախ և շատ խխտ զգուշա-
ցընում էին մեզ չէրքէզներից՝ պատմելով
խրատական պատմութիւններ այս ողով,—
և հիմք չունէի նրանց չհաւատալու։

Ես յիշեցրի Շաքրօն այս մասին։ Նա

առաջս կանդնած լսեց և յանկարծ լուս,
ատամները կրծտացնելով ու աչըերը կկոցե-
լով՝ կատուի պէս վրաս յարձակեց։ Հինդ
բողէի չափ մենք հիմնաւորապէս քոթկում
էինք իրար, և վերջապէս Շաքրօն դայրոյ-
թով պոռաց։

—Հերիք է...

Զարչարւած՝ մենք երկար ժամանակ
լուս էինք, իրար դէմ նստոտած... Շաքրօն
խեղձ-խեղձ նայեց այն կողմն, ուր շպրտել
էի կարմիր քիսէյը և ասաց։

—Ինչի՞ համար կուեցինք։ Ֆահ, ֆահ,
ֆահ... Շատ յիմար բան է։ Միթէ ես քեզ-
նից էի զողացել... Դու բան ես անում, ես
չեմ կարողանում... Ե՞ս ինչ անեմ։ Ուզում
էի քեզ օգնել...

Ես աշխատեցի բացատրել նրան, թէ ինչ
բան է զողութիւնը...

—Խնդրիմ, լըս-ո-իր։ Թո գլուխը փէտի
նման է...—արհամարհական ձեռվ ասաց ինձ
և բացատրեց։

—Կմեռնես, որ զողանաս։ Հը։ Բայց
միթէ սա կեանք է։ Զէնդ կարիք։

Վախելավ, որ նրան նորից զրդում, ես
լուցից։ Այդ արդէն զողութեան երկրորդ
դէպքն էր։ Դեռ առաջ, երբ մենք Զերնօ-
մօրիէումն էինք, նա թոցրել էր յոյն-ձըկ-
նորսներից մի զրպանի կշեռք։ Այն ժամա-
նակ էլ քիչ էր մնացել կուէինք։

—Դէ, զնանք, —ասաց նա, երբ երկուս
— 59 —

էլ թիչ հանդարտւել էինք, հաշտւել ու
հանգստացել:

Մենք շարունակեցինք ճանապարհը: Նա
օր-աւոր գառնում էր աւելի ու աւելի մոայլ
և նայում էր վրաս տարօրէն, աչքի տակով:
Մի անգամ, երբ արդէն անցել էինք Դար-
եալի կիրճը և իջնում էինք Գուղառից,
նա այսպէս խօսեց.

—Մի երկու-օր կանցնի - թէֆլիզ կը-
համնենք: Ծծը՝ ծծը՝, - ծթծթաց նա լեզ-
ւով և բացւեց բաւականութիւնից: — Կը-
գնամ տուն, — ուր էիր: Ճանապարհոր-
դում էի: Բաղնիս կգնամ... ըհա: Կուտեմ
շատ... ախ, շատ: Մօրս կասեմ շատ եմ
սոված: Հօրս կասեմ—ներիր ինձ, ես շատ
ցաւ ու կեանք եմ տեսել... զանազան
տեսակ: Բօսեակները շատ լաւ մարդիկ
են: Երբ պատահեմ, մի բուրլի կտամ, կը-
տահեմ գինետուն, կասեմ—գինի խմիր, ես
ինքս էլ եմ բօսեակ եղել! Հօրս քեզ համար
կասեմ... Այ քեզ մարդ, — մեծ եղրօր պէս
էր ինձ համար... Բան էր սովորեցնում ինձ:
Ծեծում էր ինձ, շունը... Կերակրում էր: Եւ
հիմի, կասեմ, զու կերակրիր սրան դրա
տեղակ: Մի տարի կերակրիր — այ թէ ինչ-
քան: Լսնեմ ես, Մակութիմ:

Ես սիրում էի լսել, երբ նա խօսում էր
այդպէս: Նա մի տեսակ պարզ և մանկական
տեսք էր ստանում այդպիսի վայրկեաննե-
րում: Այդպիսի խօսքերն ինձ համար հետա-

թըրքիր էին և այն պատճառով, որ ես թիփ-
լիզում ոչ մի ծանօթ մարդ չունէի, իսկ ձը-
մեռը մօտենում էր, Գուղառում արդէն
բուք պատահեց մեզ: Ես Շաքրօի վրայ մի
քիչ յոյս ունէի:

Մենք արագ էինք գնում: Ահա և Մըց-
իւթը—իրերիցի հին մայրաքաղաքը: Վա-
ղը թիգլիզ կհամնենք:

Դեռ հեռւից՝ հինգ վերստաչափ տարա-
ծութեան վրայ՝ ես տեսայ կովկասի մայրա-
քաղաքը՝ երկու սարերի մէջ սղմւած: Ճա-
նապարհի վերջն էր: Ես ուրախ էի մի տե-
սակ, Շաքրօն—անտարբեր: Նա բութ հա-
յեացքով առաջ էր նայում և մի կողմ թքո-
տում քաղցած թուքը՝ հիւանդու ծամածու-
թեամբ շարունակ փորը բռնելով: Այդ նա
անզգուշութեամբ հում գաղար էր կերել, որ
քաղել էր ճանապարհին:

—Դու կարծում ես՝ ես—վրացի աղնւա-
կանո—կզնան իմ քաղաքն օրլցերեկով
այսպէս, ինչպէս որ կամ, պատուտած ու
կեղասուտ: Զէ-է... Մենք կսպասենք երե-
կոյին: Կանգնիր:

Մենք նստեցինք մի գատարկ շինութեան
պատաի տակ և վերջին մի-մի հատ ծխախո-
տի վլանակները վասելով՝ ցրտից գողդուղա-
լով՝ ծխեցինք: Ռազմավիրական ճանապար-
հից փշում էր սուր և ուժեղ քամի: Շաքրօն
նստել՝ ատամների արանքով երգում էր մի
թախծալի երգ... Ես մտածում էի մի տաք

սենեակի և հաստատաբնակ կեանքի՝ թափառական կեանքից ունեցած միւս առաւելութիւնների մասին:

—Գնանք,—տեղից բարձրացաւ Շաբրօն վճռական դէմքով:

Մթնել էր: Քաղաքը վառում էր ճրագները: Այդ գեղեցիկ էր. կրակները հետղետէ, մինը միւսի յետեկց ինչոր մի տեղից դուրս էին ցատկառմ խաւարի մէջ, որ պատել էր այն հովիտն, ուր քաղաքն էր թագնըւած:

—Լոիր, ինձ առւր այդ բաշլը, որ երես ծածկեմ... թէ չէ կարելի է ծանօթներս ինձ ճանաչեն...

Ես աւի բաշլըս: Մենք գնում ենք Օլվինսկայա փողոցով: Շաբրօն սուլում էր ինչոր մի վճռական բան:

—Մակրիմ: Տեսնում ես ձիաքարշի կայարանը—Վերայի կամուրջը: Նստիր էնտեղ, սպասիր: Ես մանեմ մի տուն, ընկերիցս հարցնեմ մերժոց մասին, հօրս, մօրս մասին...

—Շնուռ կգաս:

—Իսկըյն: Մի մօմենտ...

Ես արագ ներս խծկեց մի մութ ու նեղիկ փողոց և անյայտացաւ նրանում... ընդմիշտ:


Ես այլիս երբէք չպատահեցի այդ մարդին—իմ ուղեկցին կեանքիս համարեա ամբողջ չորս ամսւայ ընթացքում, բայց ես

յաճախ իմ յիշում նրա մասին բարի զգացածով և ուրախ ծիծաղով:

Նա ինձ սովորեցրեց շատ բան, որ չես գտնիլ իմաստունների գրած հաստ ֆօլիանտներում (մեծածալ գրքերում), որովհետեւ կեանքի իմաստութիւնը միշտ աւելի խորը և աւելի ընդարձակ է մարդկանց իմաստութիւնից:



→ Հ Հ Հ →



Կապություն

Արքական

ՀՀ Ազգային գրադարան



NL0319588

10.696

891.71
9-83